


ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հիմնական
դպրոցի կառուցման նախագծի

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**



«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ տնօրեն՝

Վ. Սարգսյան

Բնապահպանության մասնագետ՝

Ք.Սահակյան

ԵՐԵՎԱՆ
Ապրիլ, 2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ5

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ6

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ7

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ.....11

 4.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր..... 11

 4.1.1. Առկա իրավիճակի նկարագրություն..... 11

 4.1.2. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ 12

 4.1.3. Ջրամատակարարում և ջրահեռացում..... 18

 4.1.4. Էլեկտրամատակարարում..... 19

 4.1.5. Գազամատակարարում, ջեռուցում և օդափոխություն 20

 4.2 Շինարարության կազմակերպում..... 22

 4.2.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր..... 22

 4.2.2. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ 24

 4.2.3. Քանդման և հողային աշխատանքներ , օդազործվող բնառեսուրսներ 25

 4.2.4. Աշխատանքների իրականացման անվտանգության տեխնիկա 28

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ32

 5.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները 32

 5.2 Տարածքի սեյսմիկ բնութագիրը 34

 5.3 Օդային ավազան 34

 5.4 Ջրային ռեսուրսներ 35

 5.5 Բուսական և կենդանական աշխարհ 35

 5.6 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում..... 36

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ38

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 40

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ 41

9. ԱԶԴԱԿԻՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ 41

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 42

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ43

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ45

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ46

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ47

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ, ՀԷՑ).....48

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ50

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ51

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ).....53

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ.....67

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՁԵՎ.....71

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ72

ՀԱՎԵԼՎԱԾ 12. Շինարարական հրապարակում կորոնավիրուսային
հիվանդության (COVID19) տարածման կանխարգելման միջոցառումների
մոնիտորինգի վերաբերյալ հաշվետվություն73

ՀԱՎԵԼՎԱԾ 13. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ.....75

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում Փարաքար համայնքի հիմնական դպրոցի կառուցում
Ծրագրի նպատակը	ՀՀ դպրոցների սեյսմիկ բարելավում
Ծրագրի պատվիրատու	Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ (ՀՏԶՀ)
Ձեռնարկող	«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	ք. Երևան, Աբովյան 29
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Էլ. փոստ՝ nomproject@gmail.com Հեռ.՝ (+374) 94 418 269
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Արմավիր մարզ, Փարաքար համայնք, Երևանյան փողոց 37 և 37/1
Կառուցապատման մակերեսը	4155 ք.մ
Դպրոցի նախագծային հզորությունը	Առավելագույնը 800 աշակերտ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը մշակված է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հիմնական դպրոցի կառուցման համար, որի նախագծումը կատարվել է «ՆՕՍ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից:

Փարաքարի հիմնական դպրոցի կառուցումն իրականացվելու է Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում (ԴՄԱԲԾ)՝ Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում առաջնահերթ համարվող դպրոցների ուժեղացումը կամ նորի կառուցումը: Դպրոցներն ամրացնելու կամ նորը կառուցելու պարագայում, որպես ծրագրի վերջնական արդյունք կապահովվի սեյսմակայուն դպրոցների շենքերի բարելավված տեսակարար կշիռը:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Ծրագրի իրականացման արդյունքում կբարելավվի սեյսմիկ անվտանգությունը և սեյսմիկ տեսակետից կմեծանա անվտանգ դպրոցական շենքերի ծածկույթը: Արդյունքում կունենանք.

- հակասեյսմիկ ուժեղացված և վերանորոգված դպրոցական շենքեր,
- բարելավված սեյսմիկ անվտանգության պլանավորում և կառավարման կարողություններ,
- կառավարության ծրագրի ուժեղացված կառավարում, իրականացում և մոնիտորինգ:

Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի իրականացումը ենթադրում է բնապահպանական ազդեցության գնահատման իրականացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Անվտանգության քաղաքականության դրույթների (2009թ.):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի հիմնական դպրոցի կառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը (դպրոցի նոր կառուցվող մասնաշենքի կառուցապատման մակերեսը կազմում է 4155մ²): Ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Դպրոցների սեյսմիկ կայունության բարելավման ծրագրի (ԴՄԿԲԾ) համար մշակվել է Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈՒՇ) փաստաթուղթը: Փաստաթղթի նպատակն է համատեղել ՀՀ օրենսդրական նորմերի և ԱԶԲ բնապահպանական անվտանգության մեխանիզմների պահանջները: Փաստաթուղթը մշակվել է որպես ԴՄԿԲ Ծրագրի բնապահպանական գնահատման ուղեցույց Հայաստանի Տարածքային Չարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) համար, որը հանդիսանում է Ծրագրի իրականացնող մարմինը: Այն ներառում է Ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները, դպրոցների ընտրության չափանիշները և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ Ծրագրի իրականացման բոլոր փուլերում:

Նախատեսվող գործունեության ՆԳՀ-ը իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև ԱԶԲ-ի-բնապահպանական ուղեցույցների, ձեռնարկների դրույթներին համապատասխան:

Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները՝

- նախատեսվող դպրոցի աշխատանքային նախագիծը,
- նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տարածաշրջանի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները,
- դպրոցների սեյսմիկ կայունության բարելավման ծրագրի համար մշակված Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակային փաստաթուղթը և ԱԶԲ-ի բնապահպանական ուղեցույցները,
- շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,

- շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի ներկայացում (ներառյալ՝ հանրային լսումների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, իրավական այլ ակտերից և կառավարության մի շարք որոշումներից:

ՀՀ Սահմանադրության (2015) 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման վերաբերյալ՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Ստորև ներկայացված են շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ մի շարք օրենքներ և կառավարության որոշումներ.

➤ **ՀՀ օրենքներ**

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Օրենքի 14-րդ հոդվածով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության և շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների, որոնք դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող

ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999)
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը:
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:
- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002)
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման կամ վնասագերծման կամ պահպանման կամ փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման պայմաններին և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք

- «ՀՀ անտառային օրենսգիրք» (2005)
- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006)
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)
- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

➤ **ՀՀ կառավարության որոշումներ**

- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության 25.09.2014թ. «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա, կառավարության 10.12.2015թ. նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 և կառավարության 27.05.2015 նիստի «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր (բերված են ստորև) և կոնվենցիաներ՝ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ (ցանկն առկա է ՀՀ ՇՄՆ ինտերնետային էջում՝ <http://env.am/>).

➤ **Միջազգային համաձայնագրեր.**

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-Շանտյո)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել):

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀՇՆ 10-01-2014 “Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին” N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013)

պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

4.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր

4.1.1. Առկա իրավիճակի նկարագրություն

ՀՀ Արավիրի մարզի Փարաքարի հիմնական դպրոցը գտնվում է Երևան-Էջմիածին Մ-5 միջպետական ավտոմայրուղու ձախակումնյա հարակից տարածքում, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան տանող ավտոճանապարհի խաչմերուկից 100-150մ հեռավորության վրա:

Դպրոցի տարածքը հարթ է, ունի պարզ երկրաչափական հորինվածք: Տարածքը ժամանակին համահարթեցվել է թույլ արտահայտված արևմտյան թեքությամբ: 1968-1970-ական թվականներին կառուցված դպրոցի մասնաշենքերը ներկայումս չեն համապատասխանում ժամանակակից նորմատիվ պահանջներին: Դպրոցի հողատարածքում են գտնվում դպրոցի հին մասնաշենքերը, էլեկտրական ենթակայան, դրսում կառուցված զուգարանը, կաթսայատունն ու հրաձգարանը:

Դպրոցի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 20684 ք.մ: Այն բաղկացած է դպրոցին պատկանող 2 հողատարածքներից (2.0494հա + 0.019հա), որոնց վերաբերյալ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2 վկայականները բերված են [հավելված 1](#)-ում: Դպրոցի կադաստրային սահմանները խախտված չեն, այն ապահովված է ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրամատակարարման և գազամատակարարման համակարգերով:

Դպրոցի տարածքում ռելիեֆի նիշերի տատանվում են 858.9մ-ից 860.7մ սահմաններում: Տարածքի իրադրության սխեման բերված է [հավելված 2](#)-ում:

Համաձայն տեխնիկական առաջադրանքի, ներկայիս դպրոցի տարածքի ողջ շենք-շինությունները նախատեսվում է քանդել, բացի էլեկտրական ենթակայանից, և դրանց տեղում կառուցել նոր 8 մասնաշենքեր:

Դպրոցի տարածքում ներկայիս գոյություն ունեցող շենք-շինությունները սեյսմիկ անվտանգության տեսանկյունից գնահատվել են որպես ռիսկային, ինչի արդյունքում քանդման/ապամոնտաժման աշխատանքները նախատեսված են դրանց ամբողջ ծավալում: Այդ աշխատանքներն ընդգրկելու են.

- գլխավոր մուտքի և մուտքերի հարթակների և աստիճանների ապամոնտաժում,
- միջհարկային սալերի, պատերի և միջնորմերի կազմատում,
- տանիքի ծածկույթների ապամոնտաժում,
- պատուհանի և դռների ապամոնտաժում՝ շեյերի քանդումով,
- շենքի ներսում առկա ինժեներական ենթակառուցվածքների ապամոնտաժում և այլն:

ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 6 թիվ 87-Ա որոշման համաձայն, (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=98264>), Հայաստանի տարածքային զարգացման

հիմնադրամը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կազմակերպելու է դպրոցի շենք-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի հետ համաձայնեցված ծավալներին համապատասխան: Շենք-շինությունների քանդման արդյունքում ձևավորվելիք շինանյութը սեփականության իրավունքով անհատույց հանձնվելու է դպրոցի կառուցման համար մրցութային գործընթացում ընտրված շինարարական կազմակերպությանը: Քանդման (ներառյալ՝ շենքերի հիմքերի) և շինարարական աղբի տեղափոխման աշխատանքներն իրականացվելու են ընտրված շինարարական կազմակերպության հաշվին, ինչը նույնպես ամրագրված է կառավարության սույն որոշման մեջ:

Դպրոցի բակային տարածքում առկա են դեկորատիվ և մրգատու (ծիրանենի) ծառեր, ինչպես նաև ինքնաբերաբար աճող ոչ արժեքավոր բուսականություն: Դրանց հիմնական մասը (53 թույաներ և 12 ծիրանենիներ) նախատեսվող գործունեության արդյունքում որևէ վնաս չեն կրի: Բացառություն են կազմում դպրոցի շինության հիմքերին մոտ ինքնաբերաբար աճած դեկորատիվ 9 ծառերը, որոնք կհատվեն (մանրամասներ բերված են 5.6 բաժնում):

Ներկայիս գոյություն ունեցող դպրոցը գործող է և ապահովված է անհրաժեշտ բոլոր կոմունիկացիաներով (գազամատակարարում, ջրամատակարարում, կոյուղի, ոռոգում, էլեկտրամատակարարում և այլն):

4.1.2. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Դպրոցի նոր կառուցվող մասնաշենքերի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 4155 մ²: Նոր դպրոցը նախատեսված է առավելագույնը 800 աշակերտների համար և բաղկացած է լինելու իրարից սեյսմիկ կարաններով անջատված 8 մասնաշենքերից:

Նախատեսվող գործունեության շրջանակներում կառուցապատման և բարեկարգման բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել դպրոցի ներկայիս տարածքի սահմաններում:

Նախագծային լուծումներն իրականացվել են հիմնվելով ՀՀ գործող նորմերի վրա, մասնավորապես.

- ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր»,
- ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար»,
- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»,
- ՀՀ Առողջապահության նախարարի 20 դեկտեմբերի 2002թ. թիվ 857 հրաման «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) N 2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին»,
- ՀՀ Քաղաքաշինության նախարարի 24 մարտի 2016 թ. թիվ 49-Ն հրաման «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության

բարելավման 2015-2030 թթ. ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու մասին»,

- СНиП II-64-80 “Детские дошкольные учреждения. Нормы проектирования”,
- Սեյսմակայուն շինարարության նորմեր,
- Այլ նորմեր և կարգավորումներ:

Դպրոցի նախագիծն իրականացված է համաձայն նախագծման թույլտվության առաջադրանքի: Փարաբարի համայնքապետարանի կողմից տրված և հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվությունը) բերված է [հավելված 3](#)-ում:

Տեխնիկական առաջադրանքի պայմանների համաձայն, նախագծային լուծումներն իրականացվել են օգտվելով մոդուլային դպրոցների տիպարային նախագծերի կատալոգից (Քաղաքաշինության պետական կոմիտեի N27-Ս հրաման, 20.02.2018թ)՝ տեղակայումով:

Նոր կառուցվող դպրոցի մասնաշենքերի կոնստրուկտիվ սխեման ընտրվել է սեյսմակայուն շինարարության գործող նորմերի և կանոնների համաձայն: Նախատեսվող դպրոցական համալիրն ունի ծավալահատակագծային բարդ կառուցվածք և բաղկացած է միմյանցից սեյսմիկ կարաններով բաժանված ութ մասնաշենքերից (A, B, C, D, E, F, G, H մասնաշենքեր): Բոլոր մասնաշենքերը միասին կազմում են ամբողջական համալիր, իսկ առանձնացված սեյսմիկ կարանները հնարավորություն են ընձեռնում ապահովել մասնաշենքերի սեյսմակայունությունը:

Դպրոցի կառույցների կրող համակարգերը միաձույլ երկաթբետոնե կոնստրուկցիաներով է: Բոլոր կրող կոնստրուկցիաներում նախատեսվում է օգտագործել ծանր լցանյութերով բետոն: Հիմքի նախապատրաստական շերտն իրականացվելու է B12.5 դասի ծանր բետոնից՝ 10 սմ հաստությամբ: Տանիքը լանջավոր է՝ արտաքին ջրահեռացմամբ և ջերմամեկուսացմամբ, նախատեսված է նաև շենքի ջրհորդանների հակասառեցման համակարգ:

Ճարտարապետական 0.00 նիշը համապատասխանում է 1412.50 մ բացարձակ նիշին:

Դպրոցի մասնաշենքերից B-ն եռահարկ է, իսկ G-ն երկհարկանի, որոնք ծառայելու են տարրական և միջին դպրոցների համար՝ ներառելով դասասենյակները, բուժկետը, ուսուցչանոցները, սանհանգույցները: Մյուս 6 մասնաշենքերը՝ A, C, D, E, F, H, նախագծված են որպես միահարկ կառույցներ, որտեղ տեղակայված են լինելու ճաշարանը, սպորտային և հանդիսությունների դահլիճները, գրադարանը, հանդերձարանները, ցնցուղարանները, ադմինիստրատիվ և սպասարկաման սենյակները և այլն (տես՝ աղ. 1):

Հատակագծային լուծումներն ընդգրկել են դասասենյակների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտդահլիճի, հանդիսությունների սրահի, ճաշարանի հարմարություններն ըստ գործող նորմերի: Դասասենյակները գոտևորված են ըստ I-IV, V-IX դասարանի աշակերտների բաշխման: Դպրոցական

համալիրն ունի ներքին բակ, որի վրա են բացվում ռեկրեացիոն գոտիների պատուհանները և պատշգամբները:

Աղյուսակ 1. Հատակագծային լուծումներն ըստ մասնաշենքերի

Մասնաշենք	Մենյակների/տարածքների բաշխվածություն
A	պահակակետ նախասրահ բուժկետ տնօրենի, փոխտնօրենի և հաշվապահի սենյակներ ճաշարան
B	Ռեկրեացիա հավաքարարի սենյակ սանհանգույցներ՝ ներառյալ հաշվանդամ երեխաների համար դասասենյակներ ադմինիստրատիվ սենյակ ուսուցչանոց
C	հանդիսությունների դահլիճ
D	նախասրահ տեխնիկական սենյակ
E	միջանցք տեխնիկական սպասարկման անձնակազմի սենյակ արտադասարանային աշխատանքների կազմակերպման սենյակ մարզիչի սենյակ ճաշարանի սպասքի լվացման սենյակ կերակուրների արտադրամաս պահեստ սանհանգույցներ ցնցուղարաններ հավաքարարի սենյակ էլեկտրականության սենյակ
F	սպորտային դահլիճ/մարզասրահ
G	ռեկրեացիա վերելակի նախասրահ սանհանգույցներ՝ նախատեսված անձնակազմի և աշակերտների համար ուսուցչանոց դասասենյակներ
H	գրադարան դահլիճի սպասարկման սենյակ

Նախագծային լուծումներում հատուկ ուշադրություն է դարձվել մի շարք կարևոր հարցերին՝ տարրական և միջին դպրոցի մասնաշենքերում հաշվանդամություն ունեցող երեխաների և սակավաշարժ այլ խմբերի համար հարմարեցված սանհանգույցների, վերլակների և թեքահարթակների առկայությանը: Դա կապահովի որպեսզի դպրոցի բոլոր ենթակառուցվածքները մատչելի և հասանելի լինեն հենաշարժական խնդիրներ ունեցող ցանկացած անձի համար:

Դպրոցի նոր մասնաշենքերից յուրաքանչյուրը հատակագծում ունեն հետևյալ առանցքային չափերը.

A մասնաշենք - առանցքային չափերը՝ 31.4x13.8 մ, հարկի բարձրությունը՝ 3.9 մ:

- կրող համակարգը՝ շրջանակակապային միաձույլ երկաթբետոնե, միահարկ, $h=3.9$ մ, հիմնական կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից, միաձույլ ե/բ ժապավենային հիմքով՝ 80×70 սմ (ներբանի խորությունը -2.2 մ),
- միաձույլ ե/բ սյուներ - 50×50 սմ, 30×30 սմ, միաձույլ ե/բ հեծաններ - 50×50 սմ միաձույլ ե/բ պատեր - 20 սմ,
- միաձույլ ե/բ ծածկի սալ - 22 սմ, տանիքը - հարթ:

B մասնաշենք - առանցքային չափերը՝ $B=31.4 \times 37.3$ մ, հարկի բարձրությունը՝ 3.3 մ, եռահարկ: B մասնաշենքի ծածկերի համար ստուգված է նաև ճգմանցման պայմանը:

- կրող համակարգը՝ շրջանակակապային միաձույլ երկաթբետոնե, երկհարկանի, $h=3.3$ մ, հիմնական կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից,
- միաձույլ ե/բ ժապավենային հիմք՝ 80×70 սմ (ներբանի խորությունը՝ B-ն -3.0 մ, G-ն -2.2 մ), միաձույլ ե/բ սյուներ - 50×50 սմ,
- միաձույլ ե/բ հեծաններ՝ 50×50 սմ միաձույլ ե/բ պատեր - 20 սմ,
- միաձույլ ե/բ ծածկի սալ՝ B-ն 27 սմ, G-ն 22 սմ,
- տանիքը լանջավոր է՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

C և F մասնաշենքեր - առանցքային չափերը՝ $C=19.6 \times 16.1$ մ, $F=24.5 \times 16.1$ մ, հարկի բարձրությունը՝ 6.1 մ:

- կրող համակարգը՝ պատային միաձույլ երկաթբետոնե, միահարկ, $h=6.1$ մ, հիմնական ե/բ կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից,
- միաձույլ ե/բ ժապավենային հիմք և առանձին հիմքեր սյուների տակ (ներբանի խորությունը -2.2 մ), միաձույլ ե/բ սյուներ՝ 50×50 սմ, 80×50 սմ,
- միաձույլ ե/բ պատեր՝ 30 և 20 սմ,
- ծածկը պողպատե ֆերմաներով է, որոնց վրա տեղադրված են սենդվիչ պանելներ, տանիքը լանջավոր է՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

D և E մասնաշենքեր - առանցքային չափերը՝ $D=11.6 \times 8.9$ մ, $E=16.1 \times 14.7$ մ, հարկի բարձրությունը՝ 3.6 մ:

- կրող համակարգը՝ շրջանակային միաձույլ երկաթբետոնե, միահարկ, $h=3.6$ մ, հիմնական կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից, միաձույլ ե/բ ժապավենային հիմք՝ 80×70 սմ (ներբանի խորությունը -2.2 մ), միաձույլ ե/բ սյուներ՝ 50×50 սմ,
- միաձույլ ե/բ հեծաններ՝ 50×60 սմ, միաձույլ ե/բ ծածկի սալ՝ 22 սմ, տանիքը՝ հարթ:

G մասնաշենք - առանցքային չափերը՝ $G=40.6 \times 14.7$ մ, հարկի բարձրությունը՝ 3.3 մ, երկհարկանի:

- կրող համակարգը՝ շրջանակակապային միաձույլ երկաթբետոնե, երկհարկանի, h=3.3 մ, հիմնական կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից,
- միաձույլ ե/բ ժապավենային հիմք՝ 80x70 սմ (ներքանի խորությունը՝ B-ն -3.0 մ, G-ն -2.2 մ), միաձույլ ե/բ սյուներ - 50x50 սմ,
- միաձույլ ե/բ հեծաններ՝ 50x50 սմ միաձույլ ե/բ պատեր - 20 սմ,
- միաձույլ ե/բ ծածկի սալ՝ B-ն 27 սմ, G-ն 22 սմ,
- տանիքը լանջավոր է՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

Ի մասնաշենք - առանցքային չափերը՝ 5.8x16.1 մ, հարկի բարձրությունը՝ 3.6 մ:

- կրող համակարգը՝ շրջանակակապային միաձույլ երկաթբետոնե, միահարկ, h=3.6 մ, հիմնական կոնստրուկցիաներն իրականացված են B25 դասի ծանր բետոնից, միաձույլ ե/բ ժապավենային հիմք՝ 80x70 սմ (ներքանի խորությունը՝ -2.2 մ),
- միաձույլ ե/բ սյուներ՝ 50x50 սմ, միաձույլ ե/բ հեծաններ՝ 50x60 սմ, միաձույլ ե/բ պատեր՝ 20 սմ, միաձույլ ե/բ ծածկի սալ՝ 22 սմ, տանիքը՝ հարթ:

Մասնաշենքերի կոնստրուկցիաները հաշվարկված և մշակված են համաձայն ՀՀ-ում գործող շինարարական նորմերի և կանոնների՝ ՀՀՇՆ II-6.02-2006, ՀՀՇՆ IV-10.01.01-2006, ՇՈՒՍ 2.01.07-85, ՇՈՒՍ 2.03.01-84*, ՇՈՒՍ 2.03.11-85, ՇՈՒՍ II-23-81*:

Շինարարության ընթացքում օգտագործվող հիմնական շինանյութերն են.

- պատեր՝ պեմզաբլոկներ, M100 ցեմենտ-ավազի շաղախով սվաղով և ամրանավորված ցանցով, ծեփամածիկի շերտով, ջերմամեկուսացված 100մմ էքստուդացված պենոպոլիստիրոլի սալերով,
- առաստաղներ՝ գիպոստվարաթուղթ՝ ծեփամածիկի շերտով,
- տանիք՝ գործարանային ներկված պրոֆիլավորված թիթեղներ,
- շվաքարաններ՝ ապակե ծածկոցներ՝ ներկված տուֆափն խողովակների կարկասով,
- Ֆասադներ՝ գունավոր ֆասադային ներկ ճակատների ներկման համար
- հատակներ՝ վինիլային հատակներ,
- ռեկրեացիոն գոտիներ՝ կերամոգրանիտ:

Շինարարության ընթացքում օգտագործվող բոլոր շինանյութերի մանրամասները բերված են նախագծային փաստաթղթերի ճարտարապետական բաժնում (ներկայացված է եղել հաշվետվությանը կից):

Փարաբարի հիմնական դպրոցի տարածքի համար «Հայր և որդի Տիտիզյաններ» ՄՊԸ-ի կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության համաձայն, կառույցների համար որպես հիմնատակեր կարող են ծառայել ավազակավերը և ավազները, որոնք ունեն համատարած բնույթ, ինչպես նաև կավավազները:

Դպրոցի գլխավոր հատակագիծը բերված է [հավելված 4](#)-ում, որը կազմվել է հաշվի առնելով տարածքի ռելիեֆային առանձնահատկությունները և կառուցվող շինություններիի տեղադիրքը:

Նախատեսվող գործունեության ընդհանուր ցուցանիշները բերված են աղյուսակ 2- ում:

Աղյուսակ 2. Նախատեսվող աշխատանքների վերաբերյալ ընդհանուր ցուցանիշներ

ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Ընդհանուր ցուցանիշներ		
Մասնաշենքի թիվը	հատ	8
Դպրոցի տարողունակություն	տեղ	576 (առավելագույնը 800)
Հողատարածքի մակերեսը	մ ²	20684 (2.0494հա + 0.019հա)
Կառուցապատման մակերես	մ ²	4155
Սպորտային և խաղահրապարակների մակերես		1523
Կանաչապատման գոտու մակերես	մ ²	8051
Բարեկարգվող գոտու մակերես (այդ թվում՝ ասֆալտապատում, սալվածքի իրականացում, ներքին բակ)	մ ²	6955
Հիմնական սենյակների ցուցանիշներ		
Ուսումնական սենյակների քանակ	հատ	33
Հանդիսությունների դահլիճ	մ ²	285
Մարզադահլիճ	մ ²	360
Ուսուցչանոցներ	մ ²	85.2
Բուժկետ	մ ²	25.9
Գրադարան	մ ²	78
Ինժեներական ցանցեր		
Էլեկտրամատակարարում	ԿՎԱ	178
Ջրամատակարարում	մ ³ /օր	5
Կոյուղի	մ ³ /օր	5
Ջեռուցում		
Կաթսաների քանակ	հատ	2
Պահանջվող հզորություն	կվտ-ժամ	2x (300-320կվտ)
Կաթսայատան մակերես	մ ²	31.2

Դպրոցական համալիրի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հրդեհային հիդրանտներով, ինչպես նաև էվակուացիոն ելքերով: Բոլոր հարկերում աստիճանավանդակները և էվակուացիոն ելքերը նախատեսված են ըստ գործող նորմերի և ապահովում են սեյսմիկ և հակահրդեհային պահանջները:

Դպրոցի մասնաշենքերը նախատեսվում է ջերմամեկուսացնել համաձայն գործող նորմերի և տնտեսական նպատակահարմարության սահմաններում: Աշխատանքային նախագծով բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում է տարածքում նախատեսված կաթսայատունը:

Էներգախնայողության նպատակով նորակառույց դպրոցի տանիքի շեպի վրա կտեղադրվեն 126 հատ արևային վահանակներ (345 Վտ), որոնց արտադրված

էներգիան կօգտագործվի դպրոցի էլեկտրական սնուցման համար: Տանիքին ուղղահայաց դիրքով կտեղադրվի նաև ինվենտորը, որը նախատեսված է երկու հաստատուն մուտքով, իսկ ելքային հզորությունը կազմում է 36 կՎտ:

Դպրոցի տարածքը նախատեսվում է բարեկարգել, ինչն իր մեջ ներառում է ռեկրեացիոն գոտիներն ու ներքին բակը:

Նախատեսված է տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կիրականացվի դպրոցի ներքին և արտաքին հսկողությունը, հրդեհային ազդանշանման ավտոմատ համակարգ, ինչպես նաև համակարգչային ցանց, զանգային և ժամավորման ցանցեր:

Դպրոցը ներկայումս գործող է, հետևապես ապահովված է էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերով և այլ ենթակառուցվածքներով: Ինժեներական կոմունիկացիաների նախագծերը և սխեմաները նոր կառուցվող դպրոցի համար սկզբունքորեն մնացել են անփոփոխ: Շինարարության և շահագործման փուլերում դրանց ապահովումը կիրականացվի համաձայն գոյություն ունեցող պայմանագրերի:

4.1.3. *Ջրամատակարարում և ջրահեռացում*

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների համաձայն (ՀՀՇՆ 40-01.01-2014): Նոր կառուցվող բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն տաք և սառը ջրամատակարարմամբ: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը նախատեսվում է միանցնել գոյություն ունեցող արտաքին ցանցերին՝ համաձայն տեխ. պայմանի (տես՝ [հավելված 5](#)):

Ջրամատակարարում: Համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի, նախատեսվում է դպրոցի առկա գիծը խցափակել և կառուցել ունր ջրատար, որը կմիանա տարածքի հարևանությամբ անցնող d=100 պողպատե ջրագծին, ինչպես տրված է տեխնիկական պայմանով:

Ջրի սպառումը չափելու համար նախատեսված է ջրաչափական հանգույց, որը տեղադրվելու է կառուցվող դիտահորում:

Դպրոցի ջրամատակարարման արտաքին համակարգը նախատեսվում է իրականացնել de90մմ պոլիէթիլենե խողովակներից: Հաշվի առնելով, որ ջրի ճնշումը չի ապահովում դպրոցի հաշվարկային պահանջները, նախագծով նախատեսվում է տեղադրել ստորգետնյա պոմպակայան: Պոմպակայանից դեպի դպրոց ջրագիծը նախատեսվում է իրականացնել պողպատե խողովակներից:

Ջրամատակարարման ներքին ցանցը փակուղային է, բաղկացած մագիստրալ խողովակներից, կանգնակների և ճյուղավորումներից: Մագիստրալ խողովակներն իրականացված են DN50-DN60 պողպատե խողովակներից, իսկ կանգնակները և դեպի սանիտարական սարքեր ճյուղավորումները՝ de40-de20 պոլիպրոպիլենե խողովակներից:

Տաք ջրամատակարարումն իրականացվելու է էլեկտրական ջրատաքացուցիչների միջոցով, որի մագիստրալ խողովակներն, կանգնակներն ու

ճյուղավորումներն իրականացելու են de25-de20 պոլիպրոպիլենե խողովակներից: Տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերը կազմում են 1.3լ/վրկ: Ջրամատակարարման համակարգի նորմալ շահագործման համար նախատեսված են կարգավորիչ փականներ:

Ջրահեռացում: Դպրոցի ջրահեռացման համակարգը նախատեսվում է իրականացնել $\Phi 100$ մմ և $\Phi 150$ մմ տրամագծի պոլիէթիլենե ծալքավոր խողովակներով, լայնվածքով: Կառուցվելու է ջրահեռացման բակային ցանց, որը միանալու է կառուցվող հորին:

Կոյուղու ներքին ցանցը նախատեսված է ինքնահոս, որն իրականացվելու է պոլիպրոպիլենե խողովակներից ($\Phi 50$ - $\Phi 100$): Թողարկների միջոցով ինքնահոս եղանակով դուրս բերվող կոյուղին նախատեսվում է միացնել արտաքին գործող համակարգին՝ իրականացված $\Phi 100$ - $\Phi 150$ տրամագծի խողովակներից: Կոյուղու կանգնակների վրա նախատեսված են ստուգիչներ՝ համակարգում առաջացած խցանումները վերացնելու համար: Ջրամատակարարման և կոյուղու կանգնակները թաքցվելու են շախտերում՝ ստուգիչ հատվածներում ունենալով դռնակներ:

Հրդեհաշիջում: Դպրոցի արտաքին տարածքում նախատեսված են հակահրդեհային դիտահորեր՝ հիդրանտներով, համաձայն գործող նորմերի, որոնք նախատեսված են արտաքին հրդեհաշիջման համար: Ներքին հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը, համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմների, կազմում է 1 շիթ (1x2.5լ/վ): Ներքին հրդեհաշիջման կանգնակների վրա նախատեսված են հրդեհային ծորակներ:

Տարածքի անձրևաջրահեռացումը կատարվում է ազատ հոսքով՝ դեպի կանաչ տարածքներ:

4.1.4. Էլեկտրամատակարարում

Դպրոցական համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվել է շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Նոր կառուցվող մասնաշենքի ներքին տարածքների էլեկտրամատակարարումն իրականացվելու է շինության առաջին հարկում տեղակայված էլեկտրամատակարարման սարքավորումների համար նախատեսված սենյակից:

Բաշխիչ կետից մալուխները մետաղական վաքերով և մալուխային հորանով մոնտաժվելու են դեպի շինության տարբեր հարկերում տեղադրված բաշխիչ վահաններ: Բաշխիչ վահանները նախատեսվում է տեղադրել մալուխային հորաններում: Հարկերում տեղադրված սարքավորումները սնվելու են համապատասխան հարկում տեղադրված բաշխիչ վահաններից:

Ֆիզիկայի և քիմիայի դասասենյակներում սեղանների վրա տեղադրված վարդակների սնուցումը կիրականացվի ուսուցչի սեղանին տեղադրված դեկավարման վահանից, որը ներառում է թողարկիչներ:

Նախագծով նախատեսվում է մայրուղային և խմբային ցանցերն իրականացնել պղնձե ջիդերով և չայրվող մեկուսացմամբ մալուխներով: Լուսավորության համար նախատեսվում է կիրառել փոքր հզորությամբ և բարձր աստիճանի լուսատվությամբ լուսատուներ (էներգախնայող):

Նախագծով նախատեսվում է բանվորական և վթարային էլեկտրալուսավորություն: Ընդհանուր ցանցի լարումը 380Վ է, լարումը լուսատուների վրա 220Վ: Տարածքների արհեստական լուսավորության համար նախագծով նախատեսվում է հասարակական տարածքների և դպրոցների համար կիրառվող լուսատուներ: Տարածքների լուսավորության համար կկիրառվի LED պանելներով լուսատուներ՝ ըստ համապատասխան տարածքի նշանակության: Վթարային լուսավորությունը նախատեսվում է իրականացնել վթարային լուսավորության բլոկների միջոցով, որոնք ամրացվելու են բանվորական լուսավորության լուսատուի վրա: Լուսավորության լուսատուներն ունեն մարտկոցային բլոկներ, որոնք հիմնական սնման խափանման դեպքում ապահովում են սնուցումը ոչ պակաս, քան 1-3 ժամ:

Շենքի ներքին լուսավորությունը կիրականացվի 36Վտ հզորությամբ լուսադիոդային լուսամփոփներով:

Էլեկտրամատակարարման ողջ համակարգը ապահովված կլինի հողանցմամբ և շանթապաշտպանությամբ: Հողանցման սարքվածքն իրենից ներկայացնում է շերտապողպատից (հորիզոնական հողակցիչ) բաղկացած եզրագիծ, որն անցկացվելու շինության շուրջը՝ հիմքից առնվազն 1մ հեռավորության վրա:

4.1.1. Գազամատակարարում, ջեռուցում և օդափոխություն

Դպրոցի գազամատակարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող գազատարից, որն ապահովում է ներկայումս գոյություն ունեցող դպրոցի կարիքները:

Ջեռուցում և օդափոխություն: Դպրոցի ջեռուցման, ինչպես նաև օդափոխման համակարգերի ջերմամատակարարումը նախատեսվում է իրականացնել դպրոցի նորակառույց կաթսայատան միջոցով, որի նախագիծն իրականացվել է ՇՀՈՒ II-35-76 պահանջների համաձայն:

Ջեռուցման ապահովման նպատակով կկառուցվի 31.2մ² մակերեսով (4.8x6.5մ) կաթսայատուն, որի կրող կոնստրուկցիան ե/բ կմախքն է, հիմքերը՝ ժապավենային, պատերը քարե, ինքնակրող, ծածկը՝ ե/բ, օդափոխության համար նախատեսված անցքերով:

Ջեռուցման ցանցի նախագիծը կատարվել է համաձայն 2.04.07-86 շինարարական նորմերի և կանոնների: Կաթսայատան սարքավորումները ընտրվել են հաշվի առնելով կառուցվող շինության ջերմային պահանջները: Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել 2 կաթսա՝ յուրաքանչյուրը 300-320կվտ ջերմային հզորությամբ, որոնք կկազմեն ընդհանուր ջերմային պահանջի 65%-ը: Կաթսաները

համալրված են ավտոմատ կառավարման այրիչներով: Ջերմության հաշվարկային ծախսերը կազմում են 471 կՎտ:

Որպես հիմնական վառելիք կկիրառվի բնական գազը, որը կաթսաների այրիչներին մատակարարվելու է արտաքին ցանցից: Ջերմատարը հանդիսանում է ջուրը՝ 80-60°C ջերմաստիճանային էջով:

Կաթսայատան գազասպառման համակարգի անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով կտեղադրվի այրվող գազերի ազդանշանային սարք: Ազդանշանման համար սահմանված արժեքները գերազանցելու դեպքում դեղեկտորը տալիս է լույսաձայնային ազդանշան, որի դեպքում էլ, մագնիսական կափույրը դադարեցնում է գազի մատակարարումը դեպի գազասպառման սարք:

Կաթսաներն ունեն ցածր աերոդինամիկ դիմադրություն, ուստի վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերի քարշը բնական է:

Վառելիքի այրման համար օդը այրիչների համար վերցնում են կաթսայատան սրահից, որն այնտեղ մուտք է գործում դռան և պատուհանի վրա նախատեսված ճաղաշարերից:

Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերի հեռացումը կկատարվի ծխնելույզի միջոցով, որը համապատասխանում է ՇՈՒՍ 2.04.05-91 պահանջներին, ունի 400մմ տրամագիծ և 8 մ բարձրություն:

Բնական գազով կաթսայատան շահագործման ընթացքում մթնոլորտային օդ արտանետված վնասակար գազերի գետնամերձ քանակները ($C_{NO_2}=0.03$ մգ/մ³, $C_{CO}=0.006$ մգ/մ³) գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

Օդափոխություն: Օդափոխությունը շենքում նախատեսված է ըստ ՀՀ գործող նորմերի: Իրականացվում է ներածող-արտածող, բնական և արհեստական օդափոխություն: Դասասենյակներում օդափոխությունը իրականացվում է յուրաքանչյուր աշակերտին 20մ³/ժ օդափանակ սկզբունքով, ինչպես նաև դասասենյակներում ապահովելով 2-ապատիկ օդափոխություն:

Աշխատասենյակներում ներածման-արտածման օդաքանակը հաշվարկված է 40մ³/ժ և 60մ³/ժ յուրաքանչյուր աշխատողի համար, համապատասխանաբար բնական օդափոխման հնարավորությամբ կամ առանց այդ հնարավորության աշխատասենյակների համար: Օդի պատիկությունը պահեստային հատվածներում և միջանցքներում հաշվարկվել է 1 անգամյա:

Օդափոխության համակարգերը համալրված են էներգիայի վերաօգտագործման ջերմափոխանակիչներով: Օդի ներածումը դասասենյակներ կատարվում է անմիջապես դասասենյակի պատին տեղադրված ներածման ճաղավանդակով, իսկ արտածումը կենտրոնացված՝ միջանցքի սկզբնամասից, ամբողջ միջանցքը ծառայեցնելով որպես արտածման խողովակ:

Օդափոխության նման լուծումը հնարավորություն է տվել զգալիորեն կրճատել օդափոխման խողովակների քանակը և դրանց տեղադրման ծախսերը:

4.2 Շինարարության կազմակերպում

4.2.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր

Շինարարական աշխատանքների իրականացումը բաժանված է երկու փուլի: Առաջին փուլը նախապատրաստական շրջանն է, իսկ երկրորդ փուլում իրականացվում են հիմնական աշխատանքները:

Հիմնական աշխատանքներն իրենց հերթին բաղկացած են.

- ներկայումս գոյություն ունեցող դպրոցի մասնաշենքերի ապամոնտաժման աշխատանքներից,
- նախատեսվող նոր դպրոցի մասնաշենքերի շինարարական աշխատանքներից:

Նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- շինհրապարակի արտաքին տարածքի սահմանագատում ժամանակավոր ցանկապատով, լուսավորությունով և արգելափակիչ նշաններով,
- գոյություն ունեցող օդային մալուխի ժամանակավոր ապամոնտաժում
- ժամանակավոր շինությունների տեղադրում գոյություն ունեցող մարզադաշտի տարածքում:

Հիմնական փուլում իրականացվելու են հետևյալ հիմնական աշխատանքները.

- Քանդման/ապամոնտաժման աշխատանքերը կիրականացվեն իստագույնս պահպանելով ՇՆԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկա շինարարությունում» կանոնները: Ապամոնտաժման աշխատանքների իրականացման ընթացքում կկիրառվեն ժամանակավոր հենակներ և հենարաններ՝ ծածկերի և պատերի փլուզումը կանխելու նպատակով, իսկ անվտանգության ինժեների ներկայությունը կլինի պարտադիր: Ապամոնտաժման աշխատանքների դեպքում կիրառվեն պաշտպանիչ ցանցեր, որոնք մասնաշենքի ապամոնտաժման ընթացքում կապահովեն բանվորների և շին. անձնակազմի անվտանգությունը թափվող և ընկնող առարկաներից: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կազմակերպելու է դպրոցի շենք-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացումը:
- *Շինարարական/մոնտաժման աշխատանքների* իրականացում, որի ժամանակ կիրականացվեն դպրոցի 8 նոր մասնաշենքերի շինարարական աշխատանքները:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով, իսկ շինարարության տարածքը սահմանագատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների ցանկը առաջարկվում է հասցնել նվազագույնի, հաշվի առնելով այն գտնվում է միջպետական մայրուղուն հարակից տարածքում: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների

տեղակայման համար առաջարկվում է օգտագործել շինհրապարակի ազատ տարածքները:

Առաջարկվում է նախատեսել կոնտեյների տիպի հատուկ շինություններ՝ գրասենյակ, պահակատուն, հանդերձարան, լվացարան-ցնցուղարան, ինչպես նաև բաց և փակ պահեստներ, բիոզուգարաններ, աղբի տարրաներ և այլն: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ դրանք վաճակալել այլ կազմակերպություններից:

Մինչ շինարարական աշխատանքներ սկսելը Կապալառուն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր համաձայնությունները, տրված ՏԻՄ-երի կողմից՝ կապված գոյություն ունեցող կոմունիկացիաների, էլեկտրագծերի և գազատարի հետ հատման, շինարարական աղբի տեղափոխման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ և այլն:

Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլատվությամբ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի կամ Արմավիրի մարզի մոտակա բետոնաշաղախային հանգույցից, որն պետք է ունենա չափաբաժին կշռող սարքավորումներ՝ ապահովելու համար նախագծում նախատեսված բետոնի դասը իր բոլոր ցուցանիշներով: Առաքումը նախատեսվում է իրականացնել մասնագիտացված տրանսպորտային միջոցներով և այնպիսի պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով,

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

Շինարարական հրապարակը (շին. հրապարակի կազմակերպման սխեման բերված է [հավելված 6](#)-ում) ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես դպրոցի վարչական տարածքի սահմաններում:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակը ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 3400 կգ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

4.2.2. Հիմնական մեքենա-մեխանիզմներ ու շինարարական անձնակազմ

Շինարարական մեքենա-մեխանիզմների և սարքավորումների տեսակները և տիպերը տրված են խորհրդատվական կարգով և կարող են ենթարկվել փոփոխության, ելնելով գոյություն ունեցող տեխնիկայի առկայությանից կամ ձեռքբերման հնարավորությունից, սակայն նրանք պետք է ունենան նույնատիպ տեխնիկական ցուցանիշներ:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ*

N	Մեքենա-մեխանիզմների անվանում	Մակնիշ/հզորություն	Քանակ, հատ
1	բուլդոզեր	B10M.0111-1E	1
2	թրթուրավոր էքսկավատոր	Hyundai R22 LC9S	2
3	ավտոկրունկ	Ивановец КИ 45717К-1Р	2
4	ավտոամբարձիչ	-	1
5	տեղում բետոն պատրաստելու սարք	-	2
6	ավտոբետոնախառնիչ	ABC	2
7	բետոնամուղ պոմպ	Volvo FM12	2
8	կողավոր ավտոմեքենա	MA3651702-281P1	1
9	ավտոինքնաթափ	U-414	2
10	թրթռան մակերեսային	ԻՎ-117	4
11	թրթռան խորքային	-	2
12	թրթռան	ԻՎ-113	2

13	եռակցման ապարատ	US-2	4
14	հատակներ հարթեցնող	UO-179 և UO-155	2
15	ձեռքի տոփանիչ	Ի-157	2
16	հետհար մուրճ	ՄՊ-5Պ	2
17	էլեկտրական մուրճ	ԻԷ-4207	2
18	կոմպրեսորային կայան	-	2
19	գլղոն	A-6223A	1
20	կենտրոնախույզ պոմպ	U-245	1
21	փոխադրիչ ժապվեն	SU-13	1
22	ձութահալ սարք	UO-179	1

* մեքենաների և մեխանիզմների կազմը տրված են խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 24 ամիս , որից 4 ամիսը նախատեսված է գոյություն ունեցող մասնաշենքերի ապամոնտաժման աշխատանքների համար:

Շինարարության աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների թիվը գնահատվում է առավելագույնը 45 մարդ, որից.

- բանվորներ` 40 մարդ (ներառյալ` օժանդակ տնտեսությունները):
- ինժինեռատեխնիկական անձնակազմ` 2 մարդ,
- անվտանգության աշխատակիցներ` 2 մարդ,
- այլ աշխատողներ` 1 մարդ:

4.2.3. Քանդման և հողային աշխատանքներ , օգտագործվող բնառեսուրսներ

Քանդման աշխատանքներ: ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 6 թիվ 87-Ս որոշման համաձայն, (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=98264>), Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կազմակերպելու է դպրոցի շենք-շինությունների քանդման (ապամոնտաժման) աշխատանքների իրականացումը` Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի հետ համաձայնեցված ծավալներին համապատասխան: Շենք-շինությունների քանդման արդյունքում ձևավորվելիք շինանյութը սեփականության իրավունքով անհատույց հանձնվելու է

դպրոցի կառուցման համար մրցութային գործընթացում ընտրված շինարարական կազմակերպությանը: Քանդման (ներառյալ՝ շենքերի հիմքերի) և շինարարական աղբի տեղափոխման աշխատանքներն իրականացվելու են ընտրված շինարարական կազմակերպության հաշվին, որը ևս ամրագրված է կառավարության սույն որոշման մեջ:

Հողային աշխատանքներ: Դպրոցի կառուցման հողային աշխատանքների դեպքում ընդհանուր հանույթը կազմում է 7322.85մ³, որից լիցքի նպատակով նախատեսվում է օգտագործել 2254.2մ³, ետլիցքի նպատակով՝ 3105.05մ³, իսկ 257մ³ ծավալը՝ որպես հողաբուսաշերտ, կպահպանվի և հետագայում ամբողջովին կվերաօգտագործվի տարածքի կանաչապատման ժամանակ: Մնացած 1706.6 մ³ ծավալը (ոչ պիտանի հանույթ) նախատեսվում է տեղափոխվել տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված աղբավայր (տեղեկանքը նախատեսվում է Փարաքարի համայնքապետարանից ստանալ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը):

Առաջացող թափոններ: Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները հիմնականում 4-րդ և 5-րդ դասի են (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի) և իրենցից ներկայացնում են շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ (9120060101004), շինարարության խառը թափոններ (3990130001005), ոչ պիտանի հանույթը և հողային աշխատանքների դեպքում հողային, ավազային շլամը (3160250004004), ինչպես նաև անձնակազմի կողմից առաջացրած կենցաղային աղբը, որը շինարարության ողջ ժամանակահատվածի համար գնահատվում է մոտ 3400 կգ :

Դպրոցի շենք-շինությունների քանդման արդյունքում առաջացած շին նյութերը, աղբի ծավալները, պահման վայրը և այլ հարցեր կարգավորվելու են համաձայն ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 6 թիվ 87-Ա որոշմամբ:

Շինարարական աշխատանքների ժամանակ ոչ պիտանի հանույթի ծավալը գնահատվում է 1706.6մ³: Այն նախատեսվում է տեղափոխվել տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված աղբավայր, որի վերաբերյալ տեղեկանքը նախատեսվում է Փարաքարի համայնքապետարանից ստանալ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Բնառեսուրսների օգտագործում: Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Որպես կանոն, բնակավայրերում իրականացվող շինարարության ժամանակ ժամանակավոր ջրամատակարարման ջրի հիմնական աղբյուր է ծառայում համայնքային ջրամատակարարման ցանցը, իսկ շինհրապարակի համար կապալառուի կողմից նախագծվում (շինարարության արտադրության նախագիծ՝ ՍՍՔ) և կառուցվում է մեկ համակարգային ժամանակավոր ջրամատակարարման ցանց, որը շինարարության ողջ ընթացքում ապահովվելու է անհրաժեշտ ջրապահանջը: Այդ

նախագծում ներառվելու են ջրի մատակարարման ձևը, եղանակը, միացման աղբյուրը (կետը և ձևը), ժամանակավոր ջրագծի տրամագիծը և այլ ուղեկից հարցերի լուծումները:

Շինարարական հոսքաջրերի հեռացման վայրը, ձևը, եղանակը կորոշվի կապալառուի կողմից՝ շինարարության արտադրության նախագիծի սահմաններում:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվելու է.

- հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանման/փոշենստեցման, հողի/գրունտի խոնավացման համար,
- անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների նպատակով:

Հաշվի առնելով, որ միաժամանակ շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է մոտ 4155 մ², ջրցանի հաշվարկն իրականացվել է տարածքի այդ չափի համար.

$$Մ1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ}$$

S1 - ջրվող տարածքի մակերես, 4155 մ²,

K1 - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²), տաք եղանակի պայմաններում ջրցան իրականացվում է օրական 2 անգամ:

T - հողային աշխատանքների օրերի քանակ, 110 օր:

Հետևապես ջրցանի ջրապահանջը կկազմի.

$$Մ1 = 4155 \times 2 \times 0.0015 \times 110 = 1371,15 \text{ մ}^3$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N \times + n1 \times N1) \times T1, \text{ որտեղ}$$

n - ԻՏ աշխատողների թվաքանակ, 2 մարդ

N - ԻՏԱ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ

T1 - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 528 օր

n1- բանվորների (այդ թվում՝ օժանդակ տնտեսություններ) թվաքանակ, 43 մարդ

N1 - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ

$$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 43 \times 0.025) \times 528 = 584,5 \text{ մ}^3$$

$$\text{Ընդահանուր ջրապահանջը կկազմի՝ } 1371,15 \text{ մ}^3 + 584,5 \text{ մ}^3 = \mathbf{1955,65 \text{ մ}^3}$$

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում և ըստ անհրաժեշտության այլ լրացուցիչ պայմանների ապահովումը կարող է իրականացվել հետագայում:

Շին. հրապարակը նախատեսվում է ապահովել բիոզուգարաններով, որոնց տեղադրումը, շահագործումն ու ապամոնտաժը կիրականացվի արտադրող կազմակերպության սերտիֆիկատների և նորմատիվների հիման վրա:

4.2.4. Աշխատանքների իրականացման անվտանգության տեխնիկա

Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջացման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնցից խուսափելու համար անհրաժեշտ է հետևել ստորև բերվող անհրաժեշտ միջոցառումներին:

Աղյուսակ 3. Անվտանգության նախազգուշական միջոցառումները և/բ կոնստրուկցիաների բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ:

Խախտման հնարավոր հետևանքները	Խախտման պատճառը	խախտման նախազգուշական միջոցառումները
Դարասկի քանդվում, ամբարձիչի ընկնում	Պահեստավորման տեղամասի չպատրաստված հիմք	Հիմքի պատրաստում 3 ⁰ -ից ոչ ավել թեքությամբ, հիմքի խտացում, կամ ինվենտար սալերի տեղադրում, միջադիրների տեղադրում հենարանների տակ
Ամբարձիչի ընկնում, ճուպանների կտրում, արգելակների խափանում	Ամբարձիչի բեռնունակության գերազանցում	Բեռնունակության սահմանիչի տեղադրում, բեռի քաշի ստուգում
Ոչ ճիշտ առասանում (стробка) և կոնստրուկցիայի տեղադրում, վնասվածքներ բռնիչ սարքերից, կարճատեսության նշաններ	Աշխատանքային զոնայի թույլ լուսավորում	Լրացուցիչ լուսավորման սարքերի տեղադրում, աշխատանքային զոնայի լուսավորության համար
Կոնստրուկցիաների խփում տրանսպորտին կամ դարսակին, ճուպանի լարում	Նախազգուշական ազդանշանների ոչ ճիշտ մատուցում	Առասանիչ փակվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
Ամբարձիչի ժամանակից շուտ մաշում	Ամբարձիչի աշխատանքի ռեժիմի անհամապատասխանություն նրա օգտագործման պայմաններին (ամբարձիչի օգտագործում ավելի ծանր պայմաններում, քան տրված է անձնագրում): Չնախատեսված աշխատանքային շարժումների համատեղում	Ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար ստուգում: Ամբարձիչի կոնստրուկցիային մանրակրկիտ ուսումնասիրություն
Էլեկտրական տրավմաներ	Աշխատանք էլեկտրական գծերի մոտ առանց թույլատվության (наряд-допуск), ԷԳ և ամբարձիչի, պահեստի հեռավորության գերազանցում	ԷԳ և ամբարձիչի, պահեստի թույլատրելի հեռավորության պահպանում
Տեղափոխվող կոնստրուկցիայից, առասանման սարքից վնասվածքներ	Չայնային ազդանշանի բացակայում, նախազգուշական ազդանշանի ոչ ճիշտ մատուցում	Ազդանշանի պարբերաբար ստուգում, նրա աշխատանքի անսարքության վերացում: Առասանող փակվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
	Որակագրված և մաշված բեռաբռնիչ սարքերի օգտագործում	Բեռաբռնիչ սարքերի պարբերաբար տեխնիկական վերահաստատում
Ամբարձիչով վրաերթ փակվորների վրա, ամբարձիչի պտտվող մասերով փակվորների վնասում	Աշխատանքների կազմակերպման նախազգով (ԱԿՆ) հաստատված տեղաշարժման ուղեգծի շեղում, նյութերի և կոնստրուկցիաների տեղադրում տրանսպորտի և բեռնաբառնիչ մեխանիզմների ուղեգծի վրա:	Աշխատանքների իրակա-նացում համաձայն ԱԿՆ, ազդանշանային սարքի ստուգում և անսարքության վերացում: Թույլատրելի հեռավորության, ոչ պա-կաս քան 1մ, պահպանում

	Ամբարձիչի և կառույցի միջև թույլատրելի հեռավորության գերազանցում	
Բանվորի ժամանակից շուտ հոգնածություն, գլխապտույտ և փսխում	Աշխատանքների իրականացում այն զոնաներում, որտեղ նորմաներից գերազանցում են աղմուկը, վիբրացիան, գազերի առկայությունը, աշխատանքային զոնայի տեսադաշտի բացակայում	Աղմուկի, վիբրացիայի, գազավորման թույլատրելի նորմերի պահպանում, աշխատանքային զոնայի տեսադաշտի ապահովում
Մրսածության հիվանդություններ և ցրտահարում	Նորմաներով սահմանված ջերմաստիճանից ցածր պայմաններում աշխատանք	Աշխատանքի դադարեցում, տաքացվող տնակի տեղադրում

Եթե շինարարության հրապարակում առկա են էլեկտրահաղորդիչ գծեր, ապա ամբարձիչը պետք է տեղակայվի 30մ-ից ոչ մոտիկ, ծայրամասային էլ.հաղորդիչ լարից: Եթե անհրաժեշտություն կա աշխատել 30մ-ից պակաս հեռավորության վրա, պետք է ձևակերպել կարգազիր - թույլտվություն, որտեղ նշվում են այդ աշխատանքի անվնաս պայմանները:

Բեռնաբարձիչի, տվյալ դեպքում ամբարձիչի, գործնության զոնայում չպետք է լինեն խոտանված բռնիչ սարքեր:

Առասանման եղանակները և ձևերը որոշվում են նախապես, առասանման գրաֆիկական նկարագրությունը տրվում է առասանիչ բանվորներին, մեքենավարներին և կախվում է ամբարձիչի մոտակայքում տեսանելի վայրում

Ամբարձիչի պտտվող պլատֆորմի և տրանսպորտային միջոցի կամ կառույցի կողային մասի նվազագույն հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 1մ: Տվյալ դեպքում նվազագույն հեռավորությունը 1մ է:

Ամբարձիչի սլաքի բլոկի և կեռիկի սարքի միջև (между блоком стрелы и крюковой обоймой) նվազագույն հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս, քան 0,5մ:

Ամբարձիչով տեղափոխվող էլեմենտները պետք է ճանապարհին հանդիպող առականերից բարձր լինեն 0,5մ: Թույլ չի տրվում տեղափոխվող էլեմենտը հենել ցանկապատին:

Բարձրացվող էլեմենտի քաշը չպետք է գերազանցի ամբարձիչի բեռնունակությունը սլաքի տվյալ թռիչքի դեպքում:

Արգելվում է տեղափոխել բեռներ, որոնց քաշը անհայտ է:

Բեռի բարձրացման կամ իջեցման ժամանակ թույլ չի տրվում բեռնման ճոպանի քաշում:

Թույլ չի տրվում բեռը թողնել ամբարձիչից կախված վիճակում աշխատանքի դադարի ժամանակ:

Առասանման եղանակները պետք է բացառեն վերնաշխատանքները (верхолазные работы) բեռը առասանից ազատելու համար:

Թույլ չի տրվում կատարել բեռնավորման և բեռնաթափման աշխատանքներ, եթե վարորդը գտնվում է մեքենայի մեջ:

Առասանման աշխատանքներին թույլ չեն տրվում այն բանվորները, որոնք չունեն առասանման թույլտվություն:

Եթե ամբարձիչի սպասարկման գոտին լիովին տեսանելի չէ ամբարձիչի մեքենավարի խցիկից /կաբինայից/, առասանիչ բանվորի ազդանշանների հաղորդման համար լրացուցիչ նշանակվում է ազդանշան հաղորդող բանվոր:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե հայտնաբերվում են ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 5°:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման–բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին:

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ»:

Բոլոր անհրաժեշտ միջոցները կապված շրջակա միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, համաձայն իրավասու մարմինների կարգադրությունների և ճարտարագետի հրահանգների:

Աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները և առավելագույնս պահպանվի բնական լանդշաֆտը:

1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում սահմանված սոցիալական ռիսկերի մեղմացման միջոցառումների իրականացում:
2. Կապալառուի օժանդակ կառուցվածքների՝ պահեստներ, պահեստային հրապարակներ և այլն, տեղակայում հնարավորինս շինհրապարակի սահմաններում:
3. Ծառերի և շինությունների հեռացումից խուսափում, այդպիսի աշխատանքների իրականացում միայն խիստ անհրաժեշտության դեպքում և միայն Պատվիրատուի թույլտվությունը ստանալուց հետո:
4. Շինարարական աշխատանքների իրականացում օրվա բնականոն ժամերին՝ այլապես խլացուցիչների տեղադրում:
5. Ժամանակավոր օգտագործած հողերի վերականգնում նախնական տեսքին:
6. Շինհրապարակի մաքրում և կարգի բերում, ինչպես նաև շինարարությունում աշխատող բանվորների սանիտարական պայմանների ապահովում:
7. Շինարարության մեջ աշխատողների (բանվորների) հիմնական քանակի ներգրավում մոտակա բնակավայրերից, խրախուսելով կանանց, երիտասարդների և խոցելի խմբերի ներկայացուցիչների (ընտանեկան նպաստ ստացողներ, միայնակ կանայք՝ տնտեսության ղեկավարներ, թոշակառուներ և այլն) ներգրավումը: Բանվորների մնացած մասի (եթե այդպիսիք կան) տեղավորում մոտակա բնակավայրերում և մասնագիտացված շարժական շինություններում, որոնք ապահովված կլինեն ջրով և կոյուղով:

8. Շինարարության մեջ աշխատողների պարբերական հրահանգավորումների իրականացում տեխնիկական անվտանգության հարցերով:
9. Շինարարական աշխատանքների ավարտից հետո վերականգնման աշխատանքների իրականացում, տարածքի բարեկարգում, ներառյալ՝ էսթետիկ տեսքը:

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքում: Դպրոցի տարածքը գտնվում է Մ-5 միջպետական մայրուղու հարակից տարածքում, Երևան-Էջմիածին ճանապարհի դեպի «Զվարթնոց» օդանավակայան տանող խաչմերուկից 100-150մ հեռավորության վրա:

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան միջլեռնային ակումուլյատիվ գոգահովիտի հյուսիս, հյուսիս-արևելյան մասերում:

Կլիմա: Ուսումնասիրվող տարածքը մտնում է տաք կլիմայական գոտու մեջ և ունի շոգ ամառով և ցուրտ անհողմային ձմեռով խիստ մայրցամաքային կլիմա: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +42°C, իսկ նավազագույնը՝ -30°C: Գերակշռում են միջին արագությունների 7,2մ/վրկ արագության քամիները (մ/կ Զվարթնոց): Քամու ճնշումը հասնում է մինչև 45 կգուծ/մ²: Մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 316մմ: Չյան ծածկույթի հաստությունը հասնում է 58սմ, ճնշումը՝ 70 կգուծ/մ²: Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 60սմ (մ/կ Երևան-Էրեբունի):

Ստորև բերված են օդերևութաբանական դիտարկումներով պայմանավորված որոշ կլիմայական տվյալներ (http://www.mud.am/lows/files/26_10_11_h.pdf):

Աղյուսակ 4. Օդի ջերմաստիճանն՝ ըստ Երևանի «Զվարթնոց» օդերևութաբանական կայանի դիտարկումների, °C

Բնակավայր	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան «Զվարթնոց»	854	-3.7	-1.3	5.9	13.1	17.5	22.2	26.3	25.8	20.7	13.3	5.9	-0.2	12.1	-30	42

Աղյուսակ 5. Օդի հարաբերական խոնավությունն՝ ըստ Երևանի «Զվարթնոց» օդերևութաբանական կայանի դիտարկումների, %

Բնակավայր	Օդի հարաբերական խոնավություն, %														
	Ըստ ամիսների												Միջին տարեկան	Միջինը ժամը 13-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Երևան «Զվարթնոց»	81	76	64	57	58	50	47	46	50	63	74	82	62	67	30

Աղյուսակ 6. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթն՝ ըստ Երևանի «Զվարթնոց» օդերևութաբանական կայանի դիտարկումների

Բնակավայր	Տեղումների միջին ամսական քանակը, մմ օրական առավելագույն՝ ըստ ամիսների												Չյան ծածկույթը			
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարեկան	10-օրյա max., սմ	Օրերի թիվ	Չրի max. քանակը ձյան մեջ, մմ
Երևան «Զվարթնոց»	25 18	21 24	36 34	39 30	42 20	19 24	12 21	9 14	10 22	25 33	25 23	23 16	286 34	-	-	-

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ստորին-վերին չորրորդական հասակի հրաբխային տուֆերը և խոշորաբերկորային գրունտները, որոնք ծածկված են ժամանակակից նստվածքներով՝ ներկայացված այլուվիալ խոշորաբերկորային, կավային, ավազային և տեխնածին գրունտներով: Երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին վերևից ներքև մասնակցում են հետևյալ շերտերը.

Շերտ-1 Լիցք՝ չպտկապնդված, կավավազա-խճաքարային կազմի, ծածկված ասֆալտի շերտով: Շերտն ունի համատարած բնույթ՝ 0.6-1.5մ հզորությամբ: Տեխնոգեն առաջացումներ

Շերտ-2 Հողաբուսական շերտ՝ ավազակավային կազմի: Շերտը բացված է միայն տեղամասի արևելյան եզրամասերում՝ 0.6-0.7մ հզորությամբ:

Շերտ-3 Ավազակավ՝ բաց շագանակագույն, պինդ թանձրության, կոպիճով և ճալաքարով մինչև 5%, ստորին մասերում մինչև 20-30%: գլաքարերի պարունակությամբ: Շերտն ունի համատարած բնույթ՝ 1.3-2.4մ հզորությամբ: Ժամանակակից այլուվիալ-պրոյուվիալ առաջացումներ

Շերտ-4 Ճալաքարակոպճային գրունտ միջին հղկվածության հրաբխածին ապարներից, ավազակավերի, ստորին մասերում կավավազների լցանյութով մինչև 30%, մասամբ 35-40%: Գրունտը միջին խտության է, լցանյութը սակավախոնավ (չոր): Շերտը տարածված է տեղամասի արևելյան, հյուսիս-արևելյան եզրամասերում՝ 0.7-1.4մ հզորությամբ: Ժամանակակից այլուվիալ-պրոյուվիալ առաջացումներ

Շերտ-5 Ավազ դարչնագույն, միջին և մանր, խիտ, ցեմենտացած, քարացած, կարծր, պինդ, ամուր: Շերտը տարածված է տեղամասի արևելյան, հյուսիս-արևելյան եզրամասերում՝ 1.3-1.5մ հզորությամբ: Ժամանակակից այլուվիալ, լճա-այլուվիալ նստվածքներ

Շերտ-6 Կավավազ բաց շագանակագույն, պինդ թանձրության, կոպիճով և ճալաքարով մինչև 5-15% (չոր): Շերտը տարածված է տեղամասի կենտրոնական և արևմտյան մասերում՝ 1.0-1.7մ հզորությամբ: Ժամանակակից այլուվիալ նստվածքներ

Շերտ-7 Ավազ մանր, բաց դարչնագույն, մասամբ այլ երանգների, կոպիճով և ճալաքարով մինչև 15-20%, փոշենման կավավազների նրբաշերտովորոշ միջակայքերում դիտվում են թույլ ցեմենտացված շերտիկներ: Գրունտը միջինից խիտ է, սակավախոնավ (չոր): Շերտն ունի համատարած բնույթ՝ 3.0-5.0մ բացված հզորությամբ: Ժամանակակից այլուվիալ նստվածքներ

Էկզոգեն երկրաբանական վտանգավոր երևույթները՝ ինչպիսիք են կարստը, փլուզումները, սողանքները, քարաթափությունը և այլն, կառուցապատման տարածքում բացակայում են: Սակայն, համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների (իրականացվել է 2019թ. «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ-ի կողմից), ջրերի ներթափանցման դեպում ավազակավերը և կավավազները ձեռք են

բերում գերնստման հատկություններ: Նման պրոցեսները կարող են տեղի ունենալ ձնհալի, անձրևաջրերի, ջրատար գծուղիների հոսակորուստների դեպքում: Չոր պայմաններում նշված գրունտների ֆիզիկամեխանիկական հատկանիշների ցուցանիշները բավարար են կառույցի հիմքերի համար, սակայն ջրահագեցման դեպքում դրանք կդառնան վտանգավոր շինության համար: Նշված վտանգավոր երևույթներից խուսափելու համար անրաժեշտ է կիրառել համապատասխան առաջարկվող միջոցառումներից որևէ մեկը.

- դպրոցի բոլոր սալվածքները և ամբողջ շրջակայքը պետք է ծածկել, «էկրանավորել» որակով՝ ջրամերժությունը ապահովող ասֆալտաբիտումային շերտով:
- Դպրոցի տարածքը կանաչապատել, ծառա-թփապատել և կատարել ռոռզման բավարար աշխատանքներ՝ խուսափելով ավելորդ և հարկադրված ասֆալտաբիտումային ծածկից: Այս եղանակն ավելի հուսալի է և վստահելի, ինչպես նաև ոչ շատ ծախսատար:

5.2 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Սեյսմատեկտոնական տեսանկյունից դպրոցի տարածքը գտնվում է բարդ սեյսմատեկտոնական կառուցվածք ունեցող տարածքում: «Զվարթնոց» օդանավակայանին հարակից տարածքով՝ Փարաքար համայնքով է անցնում երևանյան խորքային խզումը, որի հետ է կապված Փարաքարի երկրաշարժային օջախը: Այս տեղամասի հարակից տարածքով են անցնում նաև Գառնիի և արաքսյան ակտիվ խզումները, որոնց հետ են կապված Գառնիի, Դվինի և Արարատյան ուժեղ երկրաշարժի օջախները՝ մինչ 10 բալ և ավելի ուժգնությամբ:

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում, արագացման առավելագույն մեծությունը կազմում է $A_{max}=0.4g$ և ունի 9 բալից ավելի սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

5.3 Օդային ավազան

Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Փարաքար համայնքն իր տեղադիրքով մոտ է մայրաքաղաք Երևանին, որտեղ գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: Երևանի վերաբերյալ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի տվյալների համաձայն (<http://armmonitoring.am/page/5>), ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել

համապատասխան ՍԹԿ-ն: Որոշակի չնչի աճ նկատվել է կապված փոշու կոնցենտրացիայի հետ, որը կարող է պայմանավորված լինել տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:

5.4 Ջրային ռեսուրսներ

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Համաձայն ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության արդյունքների, նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրերը մինչ 8մ խորության հորատանցքերով չեն բացահայտվել: Համաձայն հարակից տարածքի ֆոնդային նյութերի, դրանք գտնվում են 15-16 մ խորության վրա, վարտոֆային, ճալաքարային գրունտներում և համարվում են ոչ ճնշումային ջրեր:

5.5 Բուսական և կենդանական աշխարհ

Օրագրի իրականացման տարածքը տեղակայված է ՀՀ Արմավիր մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում: Այս տարածքը ներառված է Երևանի ֆլորիստիկ շրջանում, որտեղ տարածված են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները՝ օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով: Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարաոտ սցիսկը, օձերից՝ կույր օձուկը, ոնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Նախատեսվող գործունեության բուն տեղանքը գտնվում է զարգացած ակտիվ միջավայրում: Բոլոր աշխատանքներն իրականացվելու են դպրոցի սահմանազատված տարածքում, որի տեղանքը բնութագրվում է տվյալ տարածքին բնորոշ ինքնաբերաբար աճող խոտածածկույթով:

Կառուցվող դպրոցի տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ հարակից տարածքի ուրբանացված լինելու պատճառով:

Կանաչապատման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 8051.3 մ² տարածքում, որտեղ կստեղծվի կանաչապատ գոտի տարբեր ծառատեսակների համադրությամբ (մանարամասները բերվոճ են 5.6 բաժնում):

Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ նախատեսվում է 257մ³ ծավալով հողաբուսաշերտի (հզորությունը՝ մինչը 15սմ) հեռացում և ժամանակավոր պահեստավորում՝ հետագայում տարածքի բարեկարգման աշխատանքների ժամանակ օգտագործելու նպատակով: Հանված ծավալն ամբողջովին նախատեսվում է օգտագործել դպրոցի տարածքի բարեկարգման և կանաչ գոտու իրականացման համար:

Հողաբուսաշերտի հանումը, պահպանումն ու հետագա օգտագործումը կիրականացվի ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի N1396-Ն և 2017թ. 1404-ն որոշումներով սահմանված պահանջների համաձայն:

5.6 Հողօգտագործում, տարածքի բարեկարգում և կանաչապատում

Ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների (վկայականները բերված են [հավելված 1](#)-ում) կառուցապատվող տարածքը պատկանում է Փարաքարի հիմնական դպրոցին, որի համար առկա է Փարաքարի համայնքապետարանի կողմից 09.09.2020թ. տրված N90 նախագծման թույլտվությունը (բերված է [հավելված 3](#)-ում): Ներկայիս գործող դպրոցի շենքը և հողատարածքը ապահովված են կադաստրային փաստաթղթերով, հողատարածքը սահմանագատված է:

Դպրոցի ներկայիս շենք-շինությունները, որոնք ենթակա են կազմատման, չեն հանդիսանում պատմամշակութային արժեք և ներառված չեն պատմամշակութային հուշարձանների ցանկում: Դպրոցի կառուցապատման տարածքը ներառված չէ հատուկ պահպանման ենթակա գոտիների ցանկում և չի հանդիսանում հատուկ կարգավորման օբյեկտ:

Կառուցապատվող տարածքում ձեռնարկատիրական որևէ գործունեություն չի իրականացվում և հողատարածքն ամբողջությամբ օգտագործվում է Փարաքարի հիմնական դպրոցի կողմից:

Նախագծվող նոր դպրոցի մասնաշենքերը կառուցվելու են հողատարածքի հին դպրոցի շենք-շինությունների կողմից արդեն յուրացված հատվածում:

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին դպրոցի տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ: Բարեկարգվող ընդհանուր տարածքը կազմում 6955մ² (առանց սպորտային և խաղահրապարակների մակերեսի), որտեղ նախատեսվում է սավաճքի իրականացում, ներքին բակի և ներքին ճանապարհների բարեկարգում:

Կանաչապատման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 8051.3 մ² տարածքում, որտեղ կստեղծվի կանաչապատ գոտի տարբեր ծառատեսակների համադրությամբ (տես՝ [հավելված 7](#)):

Դպրոցի տարածքում առկա 15 թույաները, որոնք ընկնում են անմիջական շինարարության գոտում, նախատեսվում է վերատնկել կանաչ տարածքում իսկ , իսկ

ինքնաբերաբար աճած 9 դեկորատիվ ծառերը, որոնք գտնվում են ներկայիս դպրոցի շինության հիմքերին շատ մոտ, կհատվեն: Հատվող այս ծառերն իրենցից ներկայացնում են ինքնաբերաբար աճած ոչ արժեքավեր բուսականություն, որոնց մի մասն ունի ծառաթփային տեսք:

Կանաչապատման համար ապագա դպրոցի տարածքում նախատեսվում են տնկել հետյալ ծառատեսակները.

- սոճի - 26 հատ
- կատալպա - 20 հատ
- Ցերցիս (հուդայածառ) - 5 հատ:

Կանաչապատման համար կիրառվող ծառատեսակներն իրենց էկոլոգիական, կենսաբանական և կլիմայական առանձնահատկություններով հարմարված կլինեն նշված տեղանքի բնակլիմայական պայմաններին և լիարժեքորեն կկատարեն իրենց սանիտարահիգիենիկ և գեղագիտական գործառույթները: Ընտրվել են էկոլոգիապես առավել կայուն ծառատեսակներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման 6-րդ և 7-րդ գլխի պահանջներին:

Համայնքային ոռոգման ջրագիծ տարածքում չկա, ինչի պատճառով ոռոգման ցանցի նախատեսումը նպատակահարման չի եղել ինչպես տեխնիկական, այնպես էլ ֆինանսական նկատառումներից ելնելով: Քանի որ մոտակա տարածքում ոռոգման ջրագծերը բացակայում են, ոռոգման ջուր նախատեսվում է բերել մոբիլ տեխնիկայի միջոցով՝ դպրոցի տնօրինության ջանքերով:

Շինարարական աշխատանքների ժամանակ հանվող հողաբուսաշերտը (257մ³, հզորությունը՝ մինչև 15 սմ) նունպես նախատեսվում է կուտակել և հետագայում օգտագործել կանաչ տարածքի բարեկարգման աշխատանքների համար:

Մինչ այդ հողաբուսաշերտը պետք է պահպանվի կույտերով, որոնց բարձրությունը և ձևը պետք է բացառեն դրանց էրոզիան: Միջազգային լավագույն փորձից ելնելով, հողաբուսաշերտի պահպանման համար սովորաբար օգտագործվում են 2 մ բարձրությամբ կույտեր՝ կողային շեպի 1:2 (25°) առավելագույն թեքությամբ:

Հողաբուսաշերտը պետք է պահպանվի այնպիսի տարածքում, որտեղ այն կարող է մնալ անխախտ վիճակում՝ չխանգարելով տվյալ տեղանքի գործունեությանը: Հողաբուսաշերտի պահման համար օգտագործվող տարածքը կարող է լինել ինչպես շինհրապարակի տարածքում, այնպես էլ նրանից դուրս: Պետք է ապահովվի, որպեսզի տվյալ տարածքը/տեղամասը լինի մաքուր բուսականությունից և շինարարությունից առաջացող ցանկացած թափոններից, որտեղ կբացառվեն էրոզիոն ցանկացած գործընթացները:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պարկտիկայի արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

▪ **Օդի աղտոտում**

Ծրագրի իրականացման ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներով: Հորատման (առանց պայթեցումների), բեռնման և թափոնակույտման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 10^6 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աերոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.2

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 4 ամիս կամ

$$4 \text{ ամիս} \times 24 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 768 \text{ ժամ/շինարարություն:}$$

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է $G=7322.85\text{մ}^3:768 = 9.53\text{մ}^3/\text{ժամ}$ կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $9.53 \text{ մ}^3 / \text{ժամ} \times 1.7 \text{ տ/մ}^3 = 16.2\text{տ/ժամ}$:

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.2 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 16.2 \times 10^6 / 3600 = 0.13 \text{ գ/վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$$0.13 \text{ գ/վ} \times 768 \text{ ժ/շ} \times 3600 \text{ վ/10}^6 = 0.36 \text{ տ/շին.ժամանակահատված}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Թույլատրված նորմերի սահմաններում ներկայացված արտանետումների պահումը և հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման

պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում (տես՝ ԲԿՊ, 3-Շրջակա միջավայրի պահպանություն), մասնավորապես փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափեխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափափ ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

▪ **Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում /տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն/ դպրոցին հարակից տարածքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը չի գերազանցի ՀՀ-ի սահմանված նորմերը: Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

▪ **Օդոտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օդոտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ է հասցվելու տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից:

▪ **Թափոնների և այլ նյութերի կառավարումը**

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա դպրոցի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականացվի Փարաքարի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայրում:

▪ **Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի (տես՝ ԲԿՊ, Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան):

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ԱԶԲ բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել, բնապահպանական կառավարման և պլանի (ԲԿՊ) համաձայն: ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Բնապահպանական կառավարման ([հավելված 8](#)) և մոնիտորինգի պլաններն ([հավելված 9](#)) ընդգրկվելու են ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու են հիմնական կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

Նախատեսված գործունեության շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների գումարային ծախսերը գնահատվում են մոտ **22 մլն**. ՀՀ դրամ, որը ներառում է նաև մշաղիտարկման ծախսերը:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով ՀՏՁՀ-ի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիտորինգ, որի շրջանակներում ՀՏՁՀ-ի բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում:

ՀՏՁՀ-ի հանձնարարականով տեխնիկական վերահսկողը պետք է իրականացնի ամենօրյա հսկողություն, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողը պարտավոր է ժամանակին տեղեկացնելու ՀՏՁՀ-ին նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի, ջրի որակի և թրթռումների մակարդակի պարամետրերի չափագրումներն իրականացնել այն դեպքերում, եթե բողոքների գրանցամատյանում լինեն ազդակիրների կողմից համապատասխան բնույթի գանգատներ:

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Փարաքարի հիմնական դպրոցի կառուցապատման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի շրջանակներում շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող աշխատանքների բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ: Հանդիպումը կայացել է 2020 թ. Օգոստոսի 25-ին՝ ժամը 11:00-ին zoom հարթակով, որին մասնակցել են դպրոցի տնօրենը, փոխտնօրենը, ուսուցիչներ, ծնողներ, համայնքի բնակիչներ, նախագծային ընկերության և ՀՏՁՀ ներկայացուցիչներ (ընդամենը՝ 31 մասնակից): Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020թ. օգոստոսի 14-ի համարում: Հանդիպման արձանագրությունը և մասնակիցների ցանկը բերված են [հավելված 13](#)-ում:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 7 օր առաջ հանդիպման վերաբերյալ մամրամասն տեղեկատվությունը եղել է հասանելի հանրության համար: Դպրոցի կառուցման նախագծային և ԲԿՊ-ի փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են նաև ՀՏՁՀ-ի պաշտոնական կայքում (www.atdf.am):

9. ԱԶԴԱԿԻՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

ՀՏՁՀ կողմից ծրագրի իրականացման ողջ ընթացքում ներդրվելու է բողոքների արձանագրման մեխանիզմ՝ (ԲԱՄ) հաշվի առնելով ԱԶԲ պահաջները և ԴՄԱԲ ծրագրի առանձնահատկությունները:


ԲԱՄ-ը մի գործընթաց է, որը հիմնականում ուղղված է արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից ծրագրի հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

ԲԱՄ-ի հիմնական գործառույթները ներկայացված են ԲԿՊ-ում, իսկ առավել մամրամասն տեղեկատվությունը շահառուների հետ կապի և բողոքների լուծման մեխանիզմների վերաբերյալ ներկայացված է ՀՏՁՀ-ի պաշտոնական կայքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. հունիսի 21:
- ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- <http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/PublicDocuments/1310049.pdf>
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիանների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- www.arlis.am
- www.atdf.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «4» Ապրիլի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՔԻ ՍՈՒԹՅԵԿՏ (ՆԵՐ)

Հայաստանի Հանրապետություն

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԱԿԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՈՒՈՒՄ

Մարզ Արմավիր, համայնք Փարաքար Երևանյան փողոց 37, Դպրոց

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՍՔ ՀԱՆԴԻՍԱԳԱՑ ՓՈՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 722851, Որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծեր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹՎՈՒԹՅՈՒՆ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-094-0104-0032
Մակերեսի չափը (հա)՝ 2.0494

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 04042018-04-0034, գաղտնաբառ՝ JXGKHZZ91C5Q

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՎՈՒԹՅՈՒՆ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	04-094-0104-0032-001	Դպրոց	4229.6 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	04-094-0104-0032-003	Չուգարան	18.9 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	04-094-0104-0032-004	Կաթսայատուն	86.4 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	04-094-0104-0032-005	Հրանձգարան	60 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	04-094-0104-0032-002	Ծածկ	59.8 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Սոս Թումայան
Գրանցումը պաշտոնը՝ Մարզերի միավորված ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ղեկավար

Վկայական N 04042018-04-0034, գաղտնաբառ՝ JXGKHZZ91C5Q



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆԵՐՈՒ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կատարողի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 17 օգոստոսի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

Փարաքարի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Փարաքար Երևանյան փողոց 37/1

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անհատույց օգտագործման 11.08.2020թ. թիվ 5826 պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-094-0104-0033

Մակերեսի չափը (հա)՝ 0.019

Նախատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ՎԿԱՅԱԿԱՆ N 17082020-04-0051, գաղտնաբառ՝ TMAMQZF9BL2H

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքից միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը՝ ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	04-094-0104-0033-001	հարթակ	68.9 քմ	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագրի գործողության ժամկետը՝ անժամկետ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Գայանե Սեփուրյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 17082020-04-0051, գաղտնաբառ՝ TMAMQZF9BL2H

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքից միջոցով

Կատարողի
կոմիտե

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ



ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱՎԱԳՑՄԱՆ ԱՆԱՔԱՐԻՆՔ) N 90 / 09.09.2020 թ.

Օրյնկո Փարաքար գյուղի միջնակարգ դպրոցի կառուցում 576 աշակերտի համար
Որչինքըն Աշխարհային (Սախազատի) փաստաթղթերի մշակման
Հասցեն Արմավիրի մարզ, ֆ. Փարաքար, Երևանյան փողոց թիվ 37 և 37/1 /հողմասեր 04-094-0104-0032 և 0104-0033 /
Կառուցապատող Հայաստանի Տարածքային Ջրագնաց Հիմնադրամ

Առաջադրանքի տրամադրման հիմքերը 1. Կառուցապատողի հայրը, 2. Էքզիզային առաջարկը:
3. Անշարժ գույքի սեփականության վկայականները՝ N 04042018-04-0034 և N 17082020-04-0051:

- 1. Հողմասեր գտնվում է Բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում
2. Հողմասերի չափերը 2,0494 հա + 0,019 հա=2,0684 հա
3. Հողմասերի անկա վիճակը Ռեյնիճի հարթ, մայրուղու կից մոտ 1,2 մետր ցածր:
4. Տրամադրված վայրում երևանյան փողոց, 4. Տեղյան փողոց, Հ. Անադյան փողոց:
5. Ինժեներական ցանցեր և սարքավորումներ ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր/
6. Կից հողմասերը Երևանյան փողոց /Մ-5 միջպետական մայրուղի, 4. Տեղյան փողոց, Հ. Անադյան փողոց, հարևան մասնավոր սեփականության բնակելի կառուցապատման հողմասեր/
7. Բնության հատուկ պահպանվող և/կամ պատմամշակութային հուշարձանների տարածքներ /պահպանված գոտիներ/
8. Հատկազոտային սահմանափակումներ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ՊԱՐԱՆՑՆԵՐ
9. Ճարտարապետահատակագծային պահանջները Մշակչի Փարաքարի միջնակարգ դպրոցի նոր շենքի նախագիծ մինչև 800 աշակերտի համար՝ դպրոցի հարկադրված 04-094-0104-0032 և 0104-0033 կադաստրային ծածկագրերով հողմասերի սահմաններում:
10. Օրյնկոյի հեռավորությունը կարմիր գծից /մետր/
11. Հեռավորությունը հարևան հողակտորներից (օրյնկոյից) /մետր/
12. Թույլատրելի բարձրությունը /մետր/
13. Կառուցապատման խորքային գործակիցը
14. Կառուցապատման տեղի ուղի
15. Կառուցապատող/ստեղծողի/ ստեղծողի հասարակությունը հողմասերի մակերեսից %-ով/
16. Կառուցապատման տեղի ուղի
17. Այլ պահանջներ:
18. Հողմասեր գտնվող շենքերի և շինությունների քանոնում կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթապահումը

- 11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները
12. Ինժեներական սարքավորումներ, ցանցեր Միացնող գործող ինժեներական ցանցերին՝ ըստ իրավասու կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմանների:

Table with 4 columns: No., Description, Name, and Remarks. Contains entries for various technical and administrative requirements.

- 13. Տարածքի ինժեներական նախապատրաստումը
14. Բարեկարգում Տարածքի առանձնացնելու ցանկապարփ, բարեկարգելու, կանաչապարփելու:
15. Հիմնարկված նյութեր Առողջության համար վրանագիր նյութեր /օր.՝ ազբար/ չնախաբեռել:
16. Պաշտպանական կառուցվածքներ
17. Հավահորեի պահանջներ
18. Հանձնագրման և բնակչության սակավաշարժ խմբի պաշտպանության միջոցառումները
19. Երկաթ միջավայրի պաշտպանումը
20. Հիմնարկության կազմակերպումը
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և մոնիթինգի մշակման փուլերը

ԼՐԱՑՈՒՑԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ
22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննության Դնրական համայնքի փորձաքննություն
23. Միջանկյալ համաձայնեցում
24. Հասարակական քննարկումները

- 25. Համաձայնեցումներ Փարաքարի համայնքապետարանի և սույն ՃՀ-ի 12 կետում նշված կազմակերպությունների հետ
26. Փոստային բաժանողային պահարանների տեղադրում
27. Այլ պայմաններ

ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Կ.Ս.
ՊԿՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ



Գլխավոր հատակագիծ

ԳԳ կրկնափոր մատյանի Փարաքարի միջնակարգ դպրոցի կառուցման նախագիծ տեղակայում			
Գլխավոր հատակագիծ			
«NOM Project»	Տեղակայում է	2020	Թեմ 9
ԼՊՏ	ՍՄՐԱԳՅԱՆ Վ	<i>[Signature]</i>	Գ-4
Տեղակայում է	ՍՆԼԵՈՒՄՅԱՆ Գ.		
«ԳԼՈՍՏԱ» ԱԿ	Տեղակայում է	2020	
ԵՐԵՎԱՆԻ Թ. 111 ՔՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԻ ՎՈՐՈՒՄՆԱՆ ԱՆՈՒՑՈՒՄՆԱԿԻ ԳՍՄՆԻ			
ՏՆՕՐԵՆ	Ո. ՄԱՆԱՅԱՆ		
Տեղակայում է	Ա. ԱՆԵՍՆԱՅԱՆ		

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ՎԵՈՒԻԱ ԶՈՒՐ, ՀԷՑ)

VEOLIA
Ջուր

«Հաստատում են»
Արտադրատեխնիկական բաժնի պետ՝
Ա. Մարտիրոսյան
09 09 2020թ.

Տեխնիկական պայման ԱՄ 2953 /2020
(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման նախագծման)

մ. Արմավիրի հ. Փարաքար Երևանյան փողոց 37, դպրոց
Ջրամիացման հասցե/

Հայաստանի Հանրապետություն
Փաստաթղթի ամրամ, ազգային/

010247123
Հաշվառման համար/

Ջրագծի միացման կետ
Google Earth

Միացման տեսակ և կարգաչիք	Ջրագիծ	Կոյուղագիծ	Հեղեղատար	Հիդրանտի միացման
Գնմնվելու վայր	Փարաքար Երևանյան փողոց 37 տարածքի հարևանությամբ			
Տրամագիծ, ճնշում, տեսակ	d=100մմ, P=1.0մթն. պող.			
Միացման կետ	Փարաքար Երևանյան փողոց 37 տարածքի հարևանությամբ անցնող ջրագծից			
Միացման տրամագիծ	Համաձայն նախագծի			
Ջրաչափի տրամագիծը, զատը և տիպը				
Այլ պահանջներ	1. Գոյություն ունեցող ջրագիծը խցափակելուց հետո, կատարել նոր ջրամիացում 2. Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր 3. Զարտ N.04-0084-53	Ամերածշտ է նախատեսել կնիտաջրերի մաքրման տեղափին սարքավորումներով ջրահեռացման համակարգ	Համաձայն ՀՀՇՆ. 40-01.01-2014թ. 307 կետի	Հիդրանտի միացման կետում կառուցել դիտահոր
Ջրամատակարարման գրաֆիկ	8.00-15.00			

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է պատվիրել նախագծահաշվարկային փաստաթղթերի կազմումը տվյալ որոտում լիցենզավորված կազմակերպությանը և այն համաձայնեցնել «Անոխա Ջուր» ՓԲԸ-ի հետ:

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը՝ դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Անոխա Ջուր» ՓԲԸ-ն կամ վերջինիս պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ Դիմող անձի հաշվին: Կառուցված նոր համակարգի միացման ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Անոխա Ջուր» ՓԲԸ՝ Դիմող անձի հաշվին:

Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններն մատուցվելու են «Անոխա Ջուր» ՓԲԸ-ի հետ Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքելուց հետո:

Սույն տեխնիկական պայմանն ուժի մեջ են 1 (մեկ) տարի ժամկետով՝ զրանցման օրվանից սկսած, հակասող դեպքում՝ այն ենթակա է վերանայման:

Կառուցման ընթացքում հողային աշխատանքները իրականացնելիս անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի դեկլարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց բոլորովրդյունները /համաձայնությունները/:

Անձրաջրերի արտաքին կոլեկտոր քաղակայության դեպքում անձրաջրերի հեռացման ներքին ցանցի բողբոջների ջրերը պետք է հեռացվեն շենքի մոտ նախատեսվող առվակներով (քաց բողբոջ), ընդ որում, պետք է նախատեսել շենքի մոտ հողի մակերևույթի որոշումը քաղաղ միջոցառումներ:

«Անոխա Ջուր» ՓԲԸ-ի ջրահեռացման համակարգին միանալու համար անհարաժեշտ է տեղադրել ֆեկալ պոմպ , քանի որ տվյալ տարածքը միջով գտնվում է ալվի ցածր , քան «Անոխա Ջուր» ՓԲԸ-ի ջրահեռացման խողովակը:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հասցեում «Անոխա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ինքնահաս մատակարարվող ջրի ճնշումը 1.0մթն. է, անհրաժեշտ է տեղադրել պոմպ (GRUNDFOS, CHV կամ նմանատիպ):

«Շահումյան» տեղամասի պետ՝ *[Signature]* Ա. Օհանյան

Տեխնիկական պայմանների համակարգող՝ *[Signature]* Գ. Վարդանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ՑԱՆՁԵՐ

ՏԵԼԵԿՎԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ

ՀՀ, ք. Երևան, 0047, Ա. Արսենյան 127, հեռ.՝ +374 (11) 59 12 01, +374 (11) 59 12 00

№ 07 19 3271 09 20 20
Ձեր _____

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամի գործադիր տնօրեն
պարոն Ա. Սողոմոնյանին

Հարգելի պարոն Սողոմոնյան,

Ի պատասխան Ձեր 29.07.2020թ. №Ե/01/1364 գրության տեղեկացնում ենք, որ գրությանը կից ներկայացված դպրոցների էլ. մատակարարման ապահովման աշխատանքները իրականացվելու է համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 658Ն որոշման, վճարելով N659Ն որոշմամբ սահմանված միացման վճար, որ կկազմի՝

Արթիկ թիվ 2 հիմնական դպրոց

պահանջվող հզորությունը 120 կՎտ 0,4 կՎ
միացման վճարը կկազմի 1103000 դրամ

Ագատանի թիվ 2 հիմնական դպրոց

պահանջվող հզորությունը 160 կՎտ 0,4 կՎ
միացման վճարը կկազմի 1403000 դրամ

Վանաձորի Բաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոց

առկա հզորությունը 25 կՎտ 0,4 կՎ
պահանջվող հզորությունը 148 կՎտ 0,4 կՎ

ընդհանուր հզորությունը 178 կՎտ
միացման վճարը կկազմի 1313000 դրամ

Գանձաքարի հիմնական դպրոց

առկա հզորությունը 37,5 կՎտ 0,4 կՎ
պահանջվող հզորությունը 125 կՎտ 0,4 կՎ

ընդհանուր հզորությունը 162,5 կՎտ
միացման վճարը կկազմի 1145500 դրամ

Օհանավանի «Ա.Ավետիսյանի» անվան միջնակարգ դպրոց

պահանջվող հզորությունը 176 կՎտ 0,4 կՎ
միացման վճարը կկազմի 1355000 դրամ

Փարաքարի միջնակարգ դպրոց

պահանջվող հզորությունը 178 կՎտ 0,4 կՎ

Հովտաշատի հիմնական դպրոց

առկա հզորությունը 50 կՎտ 0,4 կՎ
պահանջվող հզորությունը 213,25 կՎտ 0,4 կՎ

ընդհանուր հզորությունը 275,5 կՎտ

միացման վճարը կկազմի 1802375 դրամ

Փոքր Վեդի հիմնական դպրոց

առկա հզորությունը 50 կՎտ 0,4 կՎ

պահանջվող հզորությունը 115,5 կՎտ 0,4 կՎ
ընդհանուր հզորությունը 178 կՎտ

միացման վճարը կկազմի 1069250 դրամ

Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոց

պահանջվող հզորությունը 178 կՎտ 0,4 կՎ

միացման վճարը կկազմի 1538000 դրամ

Գեղիկի թիվ 2 միջնակարգ դպրոց

պահանջվող հզորությունը 194,2 կՎտ 0,4 կՎ

միացման վճարը կկազմի 1659500 դրամ

Ճամբարակի թիվ 1 հիմնական դպրոց

պահանջվող հզորությունը 178 կՎտ 0,4 կՎ

միացման վճարը կկազմի 1538000 դրամ

Հ. Կոնջոյանի անվան թիվ 15 կրթահամալիրի

առկա հզորությունը 20 կՎտ 0,4 կՎ

պահանջվող հզորությունը 172 կՎտ 0,4 կՎ

ընդհանուր հզորությունը 158 կՎտ

միացման վճարը կկազմի 2009000 դրամ

Մ.Մխչյանի անվան թիվ 68 հիմնական դպրոց

առկա հզորությունը 27 կՎտ 0,4 կՎ

պահանջվող հզորությունը 151 կՎտ 0,4 կՎ

ընդհանուր հզորությունը 178 կՎտ

միացման վճարը կկազմի 1085000 դրամ

Գ.Գալչոյանի անվան թիվ 148 ավագ դպրոց

առկա հզորությունը 75 կՎտ 0,4 կՎ

պահանջվող հզորությունը 84 կՎտ 0,4 կՎ


ընդհանուր հզորությունը 178 կՎտ

միացման վճարը կկազմի 1085000 դրամ

[Handwritten signature]
Գրիգորյան

Կառավարող Գ.Սահակյան
010-59-12-65

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԽԵՄԱ (Քանդում և կառուցում)



ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՏԱՆԿ

Հ/Հ	ԱՆՎԱՆԱՏԱՆԿ	ՄԱՍԹՈՒԹՅՈՒՆ
1	Գոյություն ունեցող դպրոցի շենքը	քանդվող
2	Գոյություն ունեցող էլեկտրապլան	հիմնական
3	Գոյություն ունեցող ջրավազան	քանդվող
I	Պահակատուն	վազոն-տնակ
II	Գրասենյակ	վազոն-տնակ
III	Հանդերձարան	վազոն-տնակ
IV	Ճաշարան	վազոն-տնակ
V	Լվացարան-ցնցուղարան	վազոն-տնակ
VI	Պատրաստի գուգարանային	
VII	Հակահրդեհային վանակ	
VIII	Հետադարձ ջրամատակարարումով պոմպ մեքենաների անկիները լվանալու համար	
IX	Ապամոնտաժած շինանյութի տեղադրման տարածք	
X	Զտված շինանյութի տեղադրման տարածք	
XI	Շինանյութի տեղադրման տարածք	

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Քանդման ենթակա դպրոցի շենքը
- Գոյություն ունեցող էլեկտրապլան
- Քանդվող շինություններ
- Գոյություն ունեցող տեղափոխվող ջրագիծ
- Գոյություն ունեցող տեղափոխվող գազատար
- Գոյություն ունեցող ծառեր
- Գոյություն ունեցող աստիճաններ
- Քանդվող կոմունիկացիաներ

Architect Arman Alaverdyan


Issue Number	Date	Description	Drawn	CHK
1	2020	Պրոյեկտի մշակում	Ա.Ա.	Ա.Ա.

ARCHITECT OF RECORD
TIM FLYNN ARCHITECT
և՛ ԽԱՐԿՈՒ ԵՐԱՍՏՐՈՒԹՅԱՆ
ԹԻՎ ՀՆԻՆ ԱՌԻՓԵՅԹՅԱՆ

Project Name: SCHOOL BUILDING IN STEPANAVAN
Project Number: 01/2020

Scale: 1:500
Date: 2020
Drawing Number: 01-3

Project Name	Year	Issue
ՓԱՐԱՔԱՐԻ ՄԱՐԿԻ ՓԱՐԱՔԱՐ ԳՈՐԾԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԽԵՄԱ	2020	ԹԵՐԹ
«NOM Project»	2020	ԹԵՐԹ
ՆԱԽԱԿԵՐ	Վ. ՍԱՐԳՍՅԱՆ	#Lay/ID
ՆԱԽԱԿԵՐ	Վ. ՍԱՐԳՍՅԱՆ	



ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՑԱՆԿ

Հ/Հ	ԱՆՎԱՆՑԱՆԿ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1	Նոր կառուցվող դպրոցի շենքը	հիմնական
2	Նոր կառուցվող կաթսայատուն	հիմնական
3	Գոյություն ունեցող էլեկտրակայան	հիմնական
I	Պահակատուն	վազոն-տնակ
II	Փրատնայակ	վազոն-տնակ
III	Հանդերձարան	վազոն-տնակ
IV	Ճաշարան	վազոն-տնակ
V	Լվացարան-ցնցողարան	վազոն-տնակ
VI	Պատրաստի զուգարանախցիկ	
VII	Հակահրդեհային վանհանակ	
VIII	Չետարարձ ցամառակարարարմով արմավ մեքենաների անիվները վանալու համար	
IX	Քանդած գոտևտի կուտակման տարածքներ ետիցքի համար	
X	Ջուրված շինանյութի տեղադրման տարածք	
XI	Շինարարի տեղադրման տարածք	
XII	Բետոնի շաղախի տարածք	

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Կառուցվող դպրոցի շենքը
- Գոյություն ունեցող էլեկտրադաշտան
- Գոյություն ունեցող շինություններ
- Գոյություն ունեցող տեղափոխվող ջրագիծ
- Գոյություն ունեցող տեղափոխվող գազատար
- Գոյություն ունեցող ծառեր
- Գոյություն ունեցող աստիճաններ
- Քանդվող շինություններ
- Էքսկավատորների աշխատանքային տեղերը

Architect Arman Alaverdyan

Խառնակ	Ամսաթիվ	Օգտագործող	Ընդհանրություն	ՇՊԸ	ՇՊԸ
--------	---------	------------	----------------	-----	-----


ARCHITECT OF RECORD
TIM FLYNN ARCHITECT
ԱՆ ԽԱԳՈՂ ԳԱՐԱՐՄԱՆ
ԹՄ ՋՆՆԱ ԱՐԻՔՅԱՆ

Project
Կառուցվող դպրոցի
SCHOOL BUILDING
IN STEPANAVAN
ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔ
ՓԱՐԱՔԱՐԻ

Տեսակ	Տեղագրող	Տեղագրման ամսաթիվ	Տեղագրողի հասցեն	Տեղագրողի հեռախոսը	Տեղագրողի էլ. փոստը
1-ի փուլի դպրոցի նոր շենքի կառուցման աշխատանքների հատակագիծ թերթ-1					
Scale	Date	D. Drawn	Drawn Number	Drawn Name	Issue
1:500	15.05.2020	Ա. Ալաբերդյան	001	Ա. Ալաբերդյան	001

ԳՂՄՍԻՐԻ ՍԱՐԳՍԻ ՓԱՐԱՔԱՐ ԳՅՈՒՄԻ ԳՈՍՏԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՆՍԱԾԻ ՇԵՆՔԱՎՈՐՄԱՆ	#Layout Name	«ԳՂՄՍԻՆ» ԱՍ	ՏԵՆՔԱՎՈՐՄԱՆ Է	2020	ԹԵՐԹ
#NOM Project	ՏԵՆՔԱՎՈՐՄԱՆ Է	Վ. ԱՐԱԳՍՅԱՆ	Փարաքար գոլդ Իժմանական դպրոց		
ՆԱԽԳԾԵՑ	Վ. ԱՐԱԳՍՅԱՆ	Ս. ԱՆՔՐԱՆՅԱՆ			
	Վ. ԱՐԱԳՍՅԱՆ	Ս. ԱՆՔՐԱՆՅԱՆ			

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ



ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)


Աղյուսակ 1: Մեղմացնող միջոցառումներ					
Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Միջոցառման իրականացման պատասխանատու մարմին	Մոնիտորինգի պատասխանատու մարմին	Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է ծրագրի արժեքի մոտ 1.2-1.5%
ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ					
1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և դրական եզրակացության ձևաչափերում	Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (հուլիս 2014 թ.), ըստ ազդեցության նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես «Գ» կատեգորիա:	1.1. Մշակվել և ՇՄՆ է ներկայացվելու ՆԳՀ հաշվետվությունը՝ բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու և փորձագիտական եզրակացություն ձևաչափերով նպատակով:	«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ, ՀՏՁՀ	ՀՏՁՀ	
2. Հանրային քննարկումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են Ծրագրի ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	2.1. ՍԱԲ ծրագրի և դպրոցի կառուցման նախագծի վերաբերյալ առաջին հանրային իրազեկում/քննարկումն իրականացվել է օգոստոսի 25-ին, 2020թ., ժամը՝ 11:00-ին, «Zoom» առցանց հավելվածով: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020թ. օգոստոսի 14-ի համարում: 2.2. Բնապահպանական պետական փորձաքննության շրջանակում իրականացվելու է դպրոցի կառուցման նախագծի և շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունների վերաբերյալ երկրորդ հանրային քննարկումը: 2.3. Հանրային քննարկմանը (1-ին քննարկում) ներկայացվել է նաև Բողոքների Անդրադարձման Մեխանիզմը (ԲԱՄ), որի ներդրումը կիրականացվի ՀՏՁՀ-ի կողմից սահմանված մեխանիզմին համաձայն (զանգահարել ՀՏՁՀ-ի թեժ գիծ և/կամ տես 4.1 ենթակետ):	ՀՏՁՀ, «ՆՕՄ Պրոյեկտ» ՍՊԸ, Դպրոցի տնօրինություն, Փարաքարի համայնքապետարան	ՀՏՁՀ	
3. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի	ԲԿՊ-ի պահանջները անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարա-	3.1. Աշխատանքային նախագիծը մշակվել է հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է	ՀՏՁՀ	ՀՏՁՀ	



<p>պատրաստում</p>	<p>վոր են բնապահպանական բացասական ազդեցություններ դպրոցի շինարարության և շահագործման փուլերում:</p>	<p>ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:</p>			
<p>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ (ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ)</p>					
<p>1. Առողջության և աշխատանքային անվտանգության պլան</p>					
<p>4. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները</p>	<p>ԲԿՊ-ի և դպրոցի կառուցման ծրագրի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: Շինհրապարակի մերձակայքում բնակվող և շինարարական հրապարակում աշխատող մարդկանց ցանկացած հիվանդությունը, վնասվածքը կամ մահը վտանգավոր նյութերի, շին առարկաների ոչ ճիշտ դասավորման և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպման պատճառով անընդունելի է և կպահանջի համապատասխան պատժամիջոցների կիրառում:</p>	<p>4.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: 4.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. ցանկապատում, պահակակետեր, ցուցանակներ, պաստառներ և այլն: 4.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը, մասնավորապես՝ չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում: 4.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակի բոլոր մեքենաներում և հասվածներում: 4.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում: 4.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ միջոցներով (սաղավարտ, շնչառական դիմակ, պաշտպանիչ ակնոց և ականջակալ, և անվտանգության գոտի), ինչպես նաև անհրաժեշտ է նախատեսել լծակներ դրանց կիրառումն ապահովելու համար: 4.7. Բարձրության (1.5մ և ավելի) վրա աշխատանքներում իրականացնել անվտանգության միջոցառումներ, մասնավորապես անվտանգության ձողեր, տեսանելիության ժապավեններ, նշաններ և այլ միջոցառումներ, ինչպես նաև բանվորներին տրամադրել անվտանգության գոտիներ: 4.8. Ըստ անհրաժեշտության իրականացնել փլուզման վտանգ ունեցող կառույցների ամրակալում դպրոցի հին շենքի ապամոնտաժման գործողություններում:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>ՀՏԶՀ ՏՎԽ</p>	

		<p>4.9. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ՀՏՁՀ-ին:</p> <p>4.10. Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորման վերաբերյալ պետք է պատշաճ գրանցում կատարել գրանցամատյանում:</p> <p>4.11. Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը:</p> <p>4.12. Անհրաժեշտ է նշանակել կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման նպատակով միջոցառումների պատասխանատու (այսուհետ՝ պատասխանատու):</p> <p>4.13. Անհրաժեշտ է շին. հրապարակում պարբերաբար իրականացնել կորոնավիրուսային հիվանդության տարածման և կանխարգելման միջոցառումների վերաբերյալ իրազեկում/դասընթաց:</p> <p>4.14. Անհրաժեշտ է շին.հրապարակն ապահովել COVID19-ի և հիմնական պաշտպանական միջոցների մասին պաստառներով: Պաստառները պետք է փակցված լինեն տեսանելի վայրերում:</p> <p>4.15. Անհրաժեշտ է շին. հրապարակում ապահովվել օգտագործված դիմակների և ձեռնոցների համար նախատեսված, ծածկով (կափարիչով) և համապատասխան նշումով աղբամաններ:</p> <p>4.16. Անհրաժեշտ է հրապարակում պահել կորոնավիրուսային հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի (թույլ իմունային համակարգ ունեցող անձինք, 65 և բարձր տարիք, քրոնիկ հիվանդություններ և այլն) աշխատողների վերաբերյալ գրանցամատյան, որտեղ պետք է կատարել նշումներ ռիսկային խմբի աշխատողների ներգրավածության, բնորոշ սիմպտոմների վերաբերյալ:</p> <p>4.17. Անհրաժեշտ է շին. հրապարակում իրականացնել մաքրության և աշխատանքային տարածքի, մակերեսների և գործիքների ախտահանման պատշաճ գործողություններ:</p> <p>4.18. Անհրաժեշտ է բոլոր աշխատողներին ապահովել պաշտպանիչ դիմակներով, ձեռնոցներով և COVID19-ի այլ անհատական պաշտպանիչ միջոցներով:</p> <p>4.19. Շին. հրապարակում աշխատանքային հանդիպում/քննարկումները, ինչպես նաև դասընթացներն ու այլ քննարկումներն անհրաժեշտ է կատարել բացօթյա տարածքում՝</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	---	--	--

		<p>աշխատողների հիմնական կազմի և/կամ աշխատողների նվազագույն քանակի ներգրավվածությամբ, և պահպանել 1.5-2 մ, սոցիալական հեռավորություն:</p> <p>4.20. Անհրաժեշտ է շին. հրապարակն ապահովել ախտահանիչ (ալկոհոլի հիմքով) հեղուկներով և անձեռոցիկներով:</p> <p>4.21. Անհրաժեշտ է շին. հրապարակում ապահովել ձեռքերի լվացման հնարավորություններ հոսող ջուր, արմնկային կամ ռոտնակային (ցանկալի է) կառավարման ծորակներով օճառներ, իսկ դրանց բացակայության/անհնարիության դեպքում անմիջապես ապահովել ախտահանիչ (ալկոհոլի հիմքով) հեղուկով:</p> <p>4.22. Անհրաժեշտ է իրականացնել աշխատողների ջերմաչափում: Յուրաքանչյուր աշխատողի ջերմությունը չափել օրական երկու անգամ, որից մեկը՝ աշխատանքի ներկայանալու պահին և կատարել համապատասխան նշումներ ջերմաչափման գրանցամատյանում:</p> <p>4.23. Անհրաժեշտ է բացառել սուր շնչառական վարակների ախտանշաններով (ջերմություն, հագ, հարբուխ, դժվարաշնչություն) աշխատողների մուտքը շին. հրապարակ:</p> <p>4.24. Շինարարական հրապարակում բոլոր աշխատողներն անհրաժեշտ է պարտադիր կրեն պաշտպանիչ դիմակներ, բացառությամբ ՀՀ առողջապահության նախարարի N 29-Ն հրամանով (11/09/2020թ.) նախատեսված դեպքերի:</p> <p>4.25. Անհրաժեշտ է շին. հրապարակում ապահովել սնվելու համար նախատեսված բացօթյա տարածք, որն ապահովված կլինի ջրով և օճառով, ձեռքերի ախտահանման միջոցներով և որտեղ կպահպանվի սոցիալական հեռավորությունը:</p> <p>4.26. Աշխատողների ընդմիջումն անհրաժեշտ է իրականացնել սահմանափակ թվով մարդկանցով նախապես պլանավորված գրաֆիկով / հերթափոխով:</p> <p>4.27. Շին. աշխատանքներում ներգրավված աշխատողների ձեռքերն ու գործիքներն անհրաժեշտ է ախտահանել մինչ աշխատանքային տարածք մուտք գործելը և այնտեղից դուրս գալուց, իսկ աշխատանքային տարածքի ցանկացած մակերես կամ սարքավորում ախտահանել նախքան աշխատանքի մեկնարկը:</p> <p>4.28. Շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է բացառել անհատական պաշտպանիչ միջոցների համատեղ</p>			
--	--	---	--	--	--


		<p>օգտագործումը կամ փոխանակումը, ինչպես նաև իրականացնել համատեղ օգտագործվող գործիքների ախտահանում մեկ աշխատակցից մյուսին փոխանցելիս:</p> <p>4.29. Գրանցամատյանում անհրաժեշտ է գրանցել շին. աշխատանքներում ներգրավված աշխատողների, այդ թվում՝ տեղաբնակների բնակության վայրի վերաբերյալ տեղեկատվությունը:</p> <p>4.30. Անհրաժեշտ է պատշաճ մակարդակով լրացնել և ՀՏՁՀ ներկայացնել կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխարգելող միջոցառումների վերաբերյալ մոնիտորինգային հաշվետվությունը, որի ձևաչափը ներկայացվում է հավելված 12-ում:</p>			
2. Հանրության հետ կապերի և իրազեկման պլան					
4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ	Ազդեցության ենթակա կողմերի և համայնքների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների կամ վրդովմունքի, որի արդյունքում կարող են տեղի ունենալ Օրագրի ժամկետների հետաձգումներ:	<p>4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախատեսվում է իրականացնել հանդիպում ազդակակիր անձանց հետ և տեղեկացնել ԲԱՄ-ի մասին:</p> <p>Հանդիպման ընթացքում կներկայացվի և կներդրվի ԲԱՄ-ը՝ համաձայն որի.</p> <p>Ա) Շինարարական հրապարակում՝ դպրոցի տարածքում, անհրաժեշտ է հիմնել հիմնական կամ շարժական գրասենյակ:</p> <p>Բ) Անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ/ցուցապաստառներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության գրասենյակի գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց, ինչպես նաև հեռախոսահամարների մասին, էլեկտրոնային հասցեներ այդ թվում ՀՏՁՀ-ի համապատասխան բաժնի հեռախոսահամարներ, էլեկտրոնային հասցեներ:</p> <p>Գ) Գրասենյակում անհրաժեշտ է պահել բողոքների գրանցամատյան: Բողոքի գրանցման ձևը տես հավելված 10-ում:</p> <p>Դ) Անհրաժեշտ է նշանակել սոցիալական հարցերով զբաղվող պատասխանատու անձ, իսկ 15 օրվա ընթացքում պատասխանել դիմորդին հարցի լուծման վերաբերյալ:</p>	ՀՏՁՀ Գապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	
3. Շրջակա միջավայրի պահպանության պլան					
5. Գոյություն ունեցող դպրոցի	Դպրոցի հարակից տարածքում (մինչև 50մ հեռավորության վրա)	<p>5.1. Օդի աղտոտման և փոշու կտրուկարում</p> <p>5.1.1. Օդի որակի չափազրույմներ կիրականացվեն</p>	ՀՏՁՀ	ՀՏՁՀ ՏՎԽ	

<p>շենքի քանդման աշխատանքներ</p> <p>Նախագծված դպրոցի շենքի կառուցման և այլ շինարարական աշխատանքներ:</p> <p>Հողային աշխատանքներ</p> <p>Շինանյութերի փոխադրումներ</p>	<p>առկա ազդակիրների, մասնավորապես՝ բնակելի տներ և կից շինություններ,, գնահատվում են փոշու և այլ վնասակար նյութերի արտանետումներ. մասնավորապես.</p> <ul style="list-style-type: none"> - առկա դպրոցի շենքի ապամոնտաժման աշխատանքների, - հողային աշխատանքների և նոր դպրոցի շենքի կառուցման, և այլ շին գործողությունների, - տրանսպորտային միջոցների երթևեկության, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործման ընթացքում:  <p>Հին շենքի ապամոնտաժման և դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում գնահատվում է աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:</p>	<p>ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում:</p> <p>5.1.2. Անհրաժեշտ է իրականացնել կանոնավոր ջրցանում շինհրապարակից փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով:</p> <p>5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար:</p> <p>5.1.4. Մեքենաների երթևեկությունն անհրաժեշտ է իրականացնել սահմանափակ 30կմ/ժ չգերազանցող արագությամբ, երթևեկություննից առաջացող արտանետումները կրճատելու համար:</p> <p>5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>5.2.1. Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:</p> <p>5.2.2. Անհրաժեշտ է խուսափել մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են՝ մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, հասարակական շենքերը և այլն:</p> <p>5.2.3. Աղմուկ առաջացնող աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել օրվա ցերեկային ժամերին 14:00-18:00:</p> <p>5.2.4. Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, որոնց սարքին լինելը պետք է ստուգվի յուրաքանչյուր օր՝ աշխատանքները սկսելուց առաջ:</p> <p>5.2.5. Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, իսկ դրանց կամ խլացուցիչների անսարքիության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից:</p> <p>5.2.6. Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, իսկ նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում՝ դրանք իրականացնել ցերեկային ժամերին՝ խստորեն պահպանելով ՀՀ թույլատրելի նորմերի մակարդակները:</p> <p>5.2.7. Անհաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>ՀՏԶ</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
---	--	--	--	--	--

<p>Նախագծվող դպրոցի տարածքում առկա ծառաթփային բուսականության վրա ազդեցություն, մասնավորապես, դպրոցի ապամոնտաժվող մասնաշենքերի հարևանությամբ աճող թվով 15 թույաներ նախատեսվում են վերատնկել, իսկ 9 ծառ՝ հատել:</p> 	<p>5.3. Բուսականության պահպանում և կտաավարում 5.3.1. Անհրաժեշտ է նախատեսել վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումներ, որպեսզի այդպիսի ծառերը լինեն հեշտությամբ ճանաչելի աշխատողների, տրանսպորտային միջոցների համար և պաշտպանված լինեն շին գործողությունների, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ ազդեցություններից: 5.3.2. Անհրաժեշտ է իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության պաստառապատում, իսկ ըստ անհրաժեշտության նաև ջրցանման միջոցառումներ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով: 5.3.3. Անհրաժեշտ է խուսափել տարածքում այն ծառերի և թփերի հատումից, որոնք ազդեցության չեն ենթարկվում և պահպանվում են՝ համաձայն դպրոցի նախագծի: 5.3.4. Անհրաժեշտ է բացառել տարածքում այն ծառերի և թփերի հատումը, որոնք նախագծի համաձայն ազդեցության չեն ենթարկվում: 5.3.5. Անհրաժեշտ է դպրոցի կանաչապատման աշխատանքներն իրականացնել հաստատված «Տարածքի կանաչապատ գոտիների բարեկարգման նախագծի» համաձայն: 5.3.6. Անհրաժեշտ է բացառել տարածքում առկա հատված բուսականության այրումը:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու/դպրոցի տնօրինություն</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>ՀՏՁՀ ՏՎԽ</p>	
<p>Նախագծվող դպրոցի տարածքում առկա է ազդեցության ենթակա բուսահող:</p> 	<p>5.4. Բուսահողի պահպանում և կտաավարում 5.4.1. Անհրաժեշտ է իրականացնել ազդեցության ենթակա հողաբուսաշերտի մերկացում և ժամանակավոր պահեստավորում/պահպանում հրապարակում դրա համար նախատեսված վայրում՝ հետագայում տարածքի կանաչապատման աշխատանքներում օգտագործելու նպատակով: 5.4.2. Հողաբուսաշերտի պահեստավորում պետ է իրականացնել 2 մ չգերազանցող բարձրությամբ կույտերի տեսքով և պաստառներով ծածակված վիճակում: 5.4.3. Անհրաժեշտ է շինաշխատանքների ընթացքում հնարավորինս բացառել հողային մակերեսների վրա անուղղակի ազդեցություններն, ինչպիսիք են շինթափոնների տեղադրում, կեղտաջրերի/բետոնաջրերի հեռացում և այլ գործողություններ:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>ՀՏՁՀ ՏՎԽ</p>	

		<p>5.4.4. Անհրաժեշտ է շինարարական ունենալ կեղտաջրերի հեռացման տարա (≥3 մ³) և հնարավոր կեղտաջրերը/բետոնաջրերը հեռացնել նախատեսված տարայում: Տարայում հետերոգեն մասնիկների նստեցումից հետո պարզված ջուրը օգտագործել շին աշխատանքներում, իսկ հետերոգեն զանգվածը՝ որպես շին աղբի հեռացնել աղբավայր:</p>			
--	--	---	--	--	--

4. Ենթակառուցվածքների և այլ ազդակալիչ օբյեկտների կառավարման պլան

<p>6. Ենթակառուցվածքների և այլ ազդակալիչ օբյեկտների վրա ազդեցություն:</p>	<p>Դպրոցի տարածքին կից շինությունների (ընդհանուր քարե ցանկապատ, բնակելի տուն) վրա ազդեցություն:</p> 	<p>6.1. Դպրոցի շենքի ապամենտաժման և նոր շենքի շինարարական գործողություններն անհրաժեշտ է խուսափել շինարարական աշխատանքների ընթացքում տարածքին կից կառույցների վրա հնարավոր ազդեցություններից, շինարարության ընթացքում վնասներ ի հայտ գալու դեպքում պատճառված վնասները կվերականգնվեն շինարար կապալառուի կողմից:</p> <p>6.2. Մեքենա-մեխանիզմների երթևեկությունը կազմակերպել շրջանցելով ազդակալիչ օբյեկտները, իսկ հնարավոր վնասների դեպքում անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան վերականգնման միջոցառումներ:</p> <p>6.3. Շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է խուսափել դպրոցի մերձակայքում առկա կառույցների մոտ կայանումից և ապահովվել վերջիններիս անխափան շահագործումը :</p> <p>6.4. Տարածքով անցնող ենթակառուցվածքների/կոմունիկացիաների տեղափոխման աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է նախապես տեղեկացնել ազդակալիչ կողմերին հնարավոր անջատումների մասին:</p> <p>6.5. Չնախատեսված կոմունիկացիաների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է անմիջապես տեղեկացնել ՀՏՁՀ-ին:</p> <p>6.6. Շինարարական կազմակերպումը և աշխատանքները, մասնավորապես՝ ցանկապատումը և հետագա շինգործողություններն անհրաժեշտ է կատարել այնպես, որ ապահովվի բնակելի տներին մոտեցնող ճանապարհի շահագործումը, ինչը հաշվի է առնվել դպրոցի նախագծում:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու,</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>ՀՏՁՀ ՏՎԽ</p>	
---	---	---	--	---------------------	--

5. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան

<p>7. Շին հրապարակի կազմակերպում:</p>	<p>Շինարարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող</p>	<p>7.1. Շին հրապարակը անհրաժեշտ է կազմակերպել բացառապես նախագծվող դպրոցի տարածքում բացառելով այլ ազդակալիչ տարածքների</p>	<p>Կապալառու</p>	<p>ՀՏՁՀ ՏՎԽ</p>	
---------------------------------------	---	---	------------------	---------------------	--

	<p>ազդեցություններ, կառույցների և անձնակազմի վրա:</p> <p>ազդակիր սպասարկվող</p>	<p>օգտագործումն առանց համապատասխան թույլտվության:</p> <p>7.2. Անհրաժեշտ է շին. հրապարակը կազմակերպել այնպես, որպեսզի ապահովվի դպրոցին կից բնակելի տների անխափան մոտեցումը:</p> <p>7.3. Անհրաժեշտ է կազմել շին հրապարակի կազմակերպման սխեման, որում նշված կլինեն շարժական տնակի տեղադրման, շին նյութերի պահեստավորման, բուսահողի ժամանակավոր պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>7.4. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում, ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>7.5. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց հորերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում և բացառել անիմաստ բաց հորերի առկայությունը շինհրապարակում:</p> <p>7.6. Անհրաժեշտ է իրականացնել բաց հորերի տեսանելի ցանկապատում/նիշահարում՝ նախազգուշացնող նշանների պարտադիր տեղադրմամբ:</p> <p>7.7. Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված: Իրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
6. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան					
<p>8. Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ</p>	<p>Դպրոցի մոտեցման ճանապարհների վիճակը երթևեկության կազմակերպման համար գնահատվում է բավարար:</p> <p>Երթևեկության և մոտեցման ճանապարհների վրա գնահատվում են հետևյալ ազդեցությունները.</p> <ul style="list-style-type: none"> • երթևեկության խափանումներ, • երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ, • փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ, 	<p>8.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:</p> <p>8.2. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումն անհրաժեշտ է կազմակերպել շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով:</p> <p>8.3. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել դպրոցի մոտեցման ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհի նախնական վիճակը:</p> <p>8.4. Հնարավորինս պետք է խուսափել երթևեկել քաղաքային երթևեկության ծանրաբեռնված ժամերին:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>	<p>ՀՏՁԶ ՏԿԽ</p>	

	<ul style="list-style-type: none"> • հանրային ճանապարհների վրա ցեխի և շին. աղբի տարածում, • շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների հնարավոր վնասներ: 	<p>8.5. Անհրաժեշտության դեպքում ձեռք բերել պետ. մարմիններից շին տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիների թույլտվություն</p> <p>8.6. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ</p> <p>8.7. Վարորդները կվերապատրաստվեն ԵԿՊ-ի (Երթևեկության կառավարման պլանը) և անվտանգության վերաբերյալ:</p> <p>8.8. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում՝ հրապարակի ներսում:</p> <p>8.9. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>8.10. Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի կլանիչներով և խլացուցիչներով:</p> <p>8.11. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր գնում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</p> <p>8.12. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</p> <p>8.13. Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել անվադողերը մաքրելու միջոցներով (աշխատանքային տեղամասում կոպչային մակերևույթների և փոխադրամիջոցների լվացման միջոցներ՝ համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար:</p> <p>8.14. Պարբերաբար պետք է ստուգել հարակից ճանապարհների վիճակը պարզելու համար շինհրապարակից տարածվող ցեխի առկայությունը, իսկ տարածման դեպքում անհրաժեշտ է այն մաքրել:</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
7. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան					
<p>9. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ կայլն)</p>	<p>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p>	<p>9.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում:</p> <p>9.2. Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:</p> <p>9.3. Անհրաժեշտ է իրականացնել նյութերի անվտանգության տվյալների թերթիկների, արտակարգ իրավիճակների արձագանքման</p>	<p>Կապալառու</p>	<p>ՀՏՁՀ ՏՎԽ</p>	

		<p>քայլերի մասին տեղեկացնող պաստառների տեղադրում:</p> <p>9.4. Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին:</p> <p>9.5. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջների համապատասխան:</p> <p>9.6. Քիմիական և այլ վտանգավոր նյութերն ու վառելանյութը պետք է օգտագործել միայն անհրաժեշտության դեպքում: Դրանք անհրաժեշտ է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ապահովված է անանցանելի/ անթափանց հատակով (ավազե, բետոնե կամ մետաղական հիմքեր) և պատնեշով:</p> <p>9.7. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>9.8. Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</p> <p>9.9. Մշտապես իրականացնել շին. հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>9.10. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p> <p>9.11. Անբարենպաստ օդերևութաբանական</p>	<p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p> <p>Կապալառու</p>		
--	--	---	--	--	--

		<p>պայմանների (քամու արագություն, անհողմություն, մատախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</p> <p>9.12. Արտակարգ պատահարի դեպքում անմիջապես անհրաժեշտ է տեղեկացնել ՀՏՁՀ-ին հաշվետվության հատուկ ձևը լրացնելու միջոցով (հավելված 11):</p> <p>9.13. Անհրաժեշտ է անմիջապես տեղեկացնել Պատասխանատուին աշխատողի մոտ թեթև հազի, ջերմության (>37.3°C) բարձրացման կամ ինքնազգացողության վատթարացման դեպքում:</p> <p>9.14. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ աշխատողի հետ շփում ունեցած անձանց շրջանակը պարզելու, նշված անձանց մեկուսացնելու և այդ մասին ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ (զանգահարելով 8003 համարով):</p> <p>9.15. Անհրաժեշտ է իրականացնել աշխատողի անմիջական աշխատանքային տարածքի կամ շփման մակերեսի, օգտագործած գործիքների և անհատական պաշտպանիչ միջոցների (պաշտպանիչ սաղավարտ, արտահագուստ և այլն) անհապաղ ախտահանման միջոցառումներ՝ հիվանդության ախտորոշման դեպքում:</p> <p>9.16. Անհրաժեշտ է լրացնել արտակարգ պատահարի հաշվետվության ձևը (հավելված 11) և ներկայացնել ՀՏՁՀ աշխատակցի մոտ հիվանդության ախտորոշման դեպքում:</p>	Կապալառու		
			Կապալառու		
			Կապալառու		
			Կապալառու		
			Կապալառու		
			Կապալառու		
8. Թափոնների և նյութերի կառավարման պլան					
10. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ	Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից իրենցից պոտենցիալ վտանգ են ներկայացնում:	<p>10.1. Հողային հանույթը և այլ շինարարական աղբը տեղադրել բացառապես տեղական իշխանության կողմից հատկացված վայրում:</p> <p>10.2. Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար:</p> <p>10.3. Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր:</p> <p>10.4. Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական</p>	Կապալառու	ՀՏՁՀ ՏՎԽ	
			Կապալառու		
			Կապալառու		

		<p>կուտակման վայր:</p> <p>10.5. Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>10.6. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով:</p> <p>10.7. Անհրաժեշտ է դպրոցի հին շենքի ապամոնտաժման աշխատանքների ընթացքում առաջացած նյութերը տեսակավորել երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերի և շին. աղբի՝ համաձայն դպրոցի ապամոնտաժման աշխատանքների ընթացակարգերի նախագծի:</p> <p>10.8. Առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը հեռացնել շինարար կապալառուի պահեստամաս այլ աշխատանքներում օգտագործելու նպատակով, իսկ գոյացած աղբը տեղափոխել աղբավայր (տես 10.1 ենթակետ):</p> <p>10.9. Անհրաժեշտ է սպառողական հատկությունները կորցրած յուղի թափոնները հավաքել հերմետիկ տարայում, պահել հրապարակում՝ ըստ վերը նկարագրված կարգի, և հետագայում հանձնել լիցենզավորված վերամշակողի:</p>	Կապալառու		
			Կապալառու		
			Կապալառու		
			Կապալառու		
			Կապալառու		
9. Աշխատողների և ղեկավար անձնակազմի դասընթացներ					
11. Աշխատողների և ղեկավար անձնակազմի վերապատրաստում	Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:	<p>11.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն:</p> <p>11.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է նաև իրազեկել աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների արարողակարգի մասին:</p> <p>11.3. Բոլոր վարորդներին անհրաժեշտ է իրազեկել ԵԿՊ-ի վերաբերյալ:</p>	<p>ՀՏՁՀ</p> <p>Կապալառու</p>	ՀՏՁՀ	
			Կապալառու	ՀՏՁՀ	ՏՎԽ
			Կապալառու	ՀՏՁՀ	ՏՎԽ
10. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան					
12. Շինհրապարակի վերականգնումը	Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները	12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները,	Կապալառու	ՀՏՁՀ	ՏՎԽ
Դպրոցի տարածքի բարեկարգում/կանաչ					

ապատում		<p>սարքավորումները, ցանկապատումը և այլն:</p> <p>12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները, ապամոնտաժման և վերատեղադրման աշխատանքները:</p> <p>12.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը:</p> <p>12.4. Անհրաժեշտ է իրականացնել ՀՏՁ-ի կողմից մշակված ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները:</p> <p>12.5. Անհրաժեշտ է կատարել բարեկարգման աշխատանքները տարածքի կանաչ գոտիներին բարեկարգման նախագծի համաձայն:</p>	Կապալառու		
ՀԵՏԵՒՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ					
13. Թերությունների վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	13.1. Անհրաժեշտ է ապահովել կանաչ զանգվածի և տնկված ծառերի 90% կայտղականությունը և աճը: Հակառակ դեպքում անհրաժեշտ է վերատնկել և փոխարինել բոլոր վնասված կամ անառողջ տեսակները:	Դպրոցի տնօրինություն/ Կապալառու	ՀՏՁ Կապալառու	
14. Բուսականության վերականգնում	Բուսականությունը չի աճում սպասվածին համաձայն	<p>14.1. Անհրաժեշտ է ներառել Ծրագրի համար նախատեսված բուսականությունը դպրոցի կանաչապատ տարածքների սպասարկման պլանում:</p> <p>14.2. Անհրաժեշտ է իրականացնել կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ:</p>	Դպրոցի տնօրինություն, ՀՏՁ, դպրոցի տնօրինություն	ՀՏՁ, Կապալառու, դպրոցի տնօրինություն	
15. Բնապահպանական աուղիտ		15.1. Իրականացնել հետշինարարական բնապահպանական աուղիտ:	ՀՏՁ	ՀՏՁ	

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատաս խանատո ւներ	Մոնիտորինգի հաճախականություն
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ						
1. Աշխատանք ունենալու հնարա- վորություններ	Աշխատուժը համալրված է տեղաբնակներով, աշխատանք- ներում ներգրավված են կանայք	Բոլոր շին. հրապարակ	Փաստաթղթերի ստուգում այդ թվում՝ կապ-լառուի կողմից աշխատատեղեր՝ նախատեսված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց համար	Կապալառուի կողմից աշխատանքի ընդուն- ված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց թիվը	ՀՏՁ ՎԽ	Կսահմանվի Կապալա- ռուի կողմից աշխա- տուծի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործո- ղությունների մոբիլի- զացման փուլում
2. Հանրային լուսմ-ներ և կապը հանրության հետ	- Հանրության տեղեկացվա- ծությունը շինարարության փուլերի վերաբերյալ - Ազդակիր կողմերի տեղե- կացվածություն Օրագրի Բողոքներին արձագանքման մեխանիզմի վերաբերյալ	Բոլոր շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգումներ, - ստուգայցեր շին տեղամասեր, - հանրային լուսմներ, - բողոքների գրանցա- մատյանի ստուգումներ	Բողոքներին արձա- գանքման մեխանիզմ իրականացվել է ԲԳՈԻՇ- ում նկարագրված բոլոր պահանջ-վող ընթացակարգերին համապատասխան	ՀՏՁ	Հանրային լուսմները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ: ԲԱՄ-ը կանոնավոր ժամանակացույցին համապատասխան:
3. Տարածքի մաք-րում բուսականու- թյունից	- տարածքի մաքրումը բու- սականությունից հնա- րավորինս նվազագույնի է հասցված, - շինհրապարակի մերձա- կայքի բուսականությունը պաշտպանված է	շին. հրապարակ	- տարածքի բուսակա- նությունից մաքրմանը վերաբերվող փաստա- թղթերի ստուգում, - շին. հրապարակ ստուգայցեր	- հատված/վերատնկված ծառերի/թփերի գրանցամատյանն առկա է	ՀՏՁ	Կանոնավոր ժա- մանակացույցին համապատաս-խան
4. Շրջակա միջա- վայրի պահպա- նություն	- նստվածքների առաջացում, - փոշու և այլ օդի աղտո- տիչների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	Բոլոր շին. հրապարակ- ներ, շին. հրա- պարակից 50մ հեռավորությ- յան վրա գտնվող փոշու, աղ- մուկի, թրթռումների զգայուն ընկալիչներ	- ակնադիտական ստու- գումներ՝ շինհրապարակ ստուգայցերի միջոցով, - բողոքների գրանցա- մատյանի գրառումների ստուգում; - փոշու, աղմուկի, թրթռումների մակար- դակների գործիքային ստուգում և վերլուծու- թյուն բողոքների առկայության դեպքում:	- գրանցամատյանում գրանցված բողոքնե- րի քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մա- կարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում	ՀՏՁ ՎԽ	Կանոնավոր ժա- մանակացույցին համապատաս-խան

<p>5. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր</p>	<p>- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հատակագիծը և կառավարումը:</p>	<p>Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառ-ված անհարմարություններ:</p>	<p>- փաստաթղթերի ստուգում, - ստուգայցեր շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր</p>	<p>- Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը և հատակագիծը համապատասխանում են պետ. մարմինների կողմից թույլատրվածին և տարածքի կառավարման պլանին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը</p>	<p>ՀՏՁՀ ՎԽ</p>	<p>Կանոնավոր նակացույցին պատասխան</p>	<p>Ժամահամա-</p>
<p>6. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը</p>	<p>- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - դպրոցներին, դասերին և հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը ճանապարհներին և այլ կառույցներին՝ հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ:</p>	<p>Ճանապարհների օգտագործում, սարքավորումների և նյութերի տեղափոխության համար, շինհրապարակի մոտեցման մուտքերը</p>	<p>- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր</p>	<p>- Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը Պլանի մասնագրերին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը</p>	<p>ՀՏՁՀ ՎԽ</p>	<p>Կանոնավոր նակացույցին պատասխան</p>	<p>Ժամահամա-</p>
<p>7. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում</p>	<p>- վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր</p>	<p>Բոլոր շին. հրապարակ</p>	<p>- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր</p>	<p>- Պատահարների դեպքում պատահարների հաշվետվության ձևը լրացված է, - պատահարները կառավարվում են արտակարգ իրավիճակների պլանին համապատասխան:</p>	<p>ՀՏՁՀ ՎԽ</p>	<p>Կանոնավոր նակացույցին պատասխան</p>	<p>Ժամահամա-</p>
<p>8. Թափոնների և շին. նյութերի կառավարում</p>	<p>- Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում</p>	<p>Բոլոր շին. հրապարակներ</p>	<p>- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, հանքեր, թափոնավայրեր կատարած ստուգայցեր</p>	<p>- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրան-</p>			

				<p>ցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:</p>		
<p>9. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների, սանիտարահիիենիկ կանոնների պահպանում, կանաչապատում և տարածքի բարեկարգում</p>	<ul style="list-style-type: none"> - Աշխատողների սանիտարակենցաղային պայմանները համապատասխանում են ՀՀ գործող նորմերին, - շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է: 	<p>Տեղամասեր կատարած ստուգայցեր</p>	<ul style="list-style-type: none"> - Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին: - Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրություն պահանջների: - Շինհրապարակի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլանն առկա է: - Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը: 	<ul style="list-style-type: none"> - ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից, - թփերի վերատնկման վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին, - ապահովված է թփերի 90% կաչողականությունը: 	<p>ՀՏՁՀ ՎԽ</p>	
Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն (Թ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն) Փ ՈՒ Լ						
<p>10. Թերությունների վերացման աշխատանքներ</p>	<ul style="list-style-type: none"> - Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ 	<p>Դպրոցի տարածքի սահմաններում</p>	<p>Բողոքներ զգայուն ընկալիչների կողմից</p>	<p>Բողոքների դեպքում՝ աղմուկի և թրթռումների, օդի որակի չափագրումներ ստուգելու համար համապատասխանությո-</p>	<p>ՀՏՁՀ</p>	

				յունը ՀՀ օրենսդրական պահանջներին		
11. Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Բարեկարգման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Ծառերի, թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	ՀՏԶՀ, Դպրոցի տնօրինություն	
12. Առողջության և անվտանգության ապահովում	Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջների, սանիտարական կանոնների և նորմերի պահպանում	Դպրոցի տարածքի սահմաններում	- ստուգայցեր - բողոքների գրանցամատյանի ստուգումներ	ՀՀ Առողջապահության նախարարի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջների կատարման ստուգումներ	Դպրոցի տնօրինություն	

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԲՈՂՈՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՁԵՎ

Դիմումը ներկայացնելու ամիս/ ամսաթիվը	Դիմողի անուն/ ազգանունը	Դիմողի կարգավիճակը (դպրոցի դասատու, աշակերտ, ծնող, հարևան, ձեռնարկատեր, այլ)	Բողոքի/առաջարկի բովանդակությունը	Դիմողի ստորագրությունը	Դիմումի կարգավիճակը (լուծված/ ընթացքում/ փոխանցված ՀՏՁՀ-ին/ չլուծված)

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Պատահարի ամիս/ ամսաթիվը	Պատահարի նկարագրությունը	Պատահարի վերացման միջոցառումները	Միջոցառումների ժամկետները և պատասխանատուն	Պատահարի վերացման կարգավիճակը

ՀԱՎԵԼՎԱԾ 12. Շինարարական հրապարակում կորոնավիրուսային հիվանդության (COVID19) տարածման կանխարգելման միջոցառումների մոնիտորինգի վերաբերյալ հաշվետվություն

Նախագիծ՝ _____

Իրականացնող կազմակերպություն՝ _____

Շինարարական տեղամաս՝ _____

Կապալառու՝ _____

Ստուգայցն իրականացրել է: Անուն/ ազգանուն/ պաշտոն՝ _____

Ամսաթիվ՝ _____

Մոնիտորինգի ստուգայցն իրականացվել է Կապալառուի ներկայացուցչի՝ միջոցառումների պատասխանատուի մասնակցությամբ: Անուն/ ազգանուն/ պաշտոն/ _____

No	Կանխարգելիչ միջոցառումը (ըստ ԲԿՊ-ի)	Իրականացման կարգավիճակը (հաստատել նկարով, գրանցաթղթով և այլն): Այո/ՈՉ	Իրականացման հաճախականությունը
Աշխատանքների կազմակերպման ընդհանուր կանոններ			
1.	Կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման նպատակով միջոցառումների պատասխանատուն նշանակված է:		
2.	Իրականացվում է հիվանդության տարածման և կանխարգելման միջոցառումների վերաբերյալ իրազեկում/դասընթաց:		
3.	Օգտագործված դիմակների և ջեռնոցների համար նախատեսված, ծածկով (կափարիչով) և համապատասխան նշումով աղբամանը առկա է:		
4.	Շին.հրապարակի տեսանելի վայրերում առկա է COVID19-ի և հիմնական պաշտպանական միջոցների կիրառման մասին պաստառները:		
5.	Հրապարակում պահվում է կորոնավիրուսային հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի (թույլ իմունային համակարգ ունեցող անձինք, 65 և բարձր տարիք, քրոնիկ հիվանդություններ և այլն) աշխատողների վերաբերյալ գրանցամատյան, որտեղ ամենաքիչը գրանցվում է. - ռիսկային խմբի աշխատողների ներգրավվածությունը (այո/ոչ) - բնորոշ սիմպտոմների առկայությունը (այո/ոչ) :		
6.	Կազմակերպվում են հրապարակի աշխատանքային տարածքների, գործիքների, անհատական պաշտպանիչ միջոցների մաքրման և ախտահանման գործողությունները պատշաճ եղանակով և ժամանակում:		
7.	Աշխատակիցների հանդիպում-քննարկումները իրականացվում են բացօթյա տարածքում և պահպանելով սոցիալական հեռավորությունը (1.5-2 մ):		
8.	Շինարարական հրապարակում առկա են ախտահանիչներով տարողություններ և		

	անձեռոցիկներ:		
9.	Շինարարական հրապարակը ապահովված է ձեռքերի լվացման հնարավորություններ՝ հոսող ջուր, կառավարման ծորակներով օճառներ (դրա անհնարինության դեպքում՝ անմիջապես ապահովվում է ախտահանման հեղուկով):		
Կանխարգելման կանոններ			
10.	Իրականացվում է աշխատողների ջերմաչափում: Յուրաքանչյուր աշխատողի ջերմությունը չափվում է օրական երկու անգամ, որից մեկը՝ աշխատանքի ներկայանալու պահին, և կատարվում է համապատասխան նշումը գրանցամատյանում:		
11.	Մուր շնչառական վարակների ախտանշաններով (ջերմություն, հազ, հարբուխ, դժվարաշնչություն) աշխատողների մուտքը շինարարական հրապարակ բացառվում է:		
12.	Շինարարական հրապարակում աշխատողները ապահովված են և պարտադիր կրում են պաշտպանիչ դիմակներ և այլ անհրաժեշտ ահատական պաշտպանիչ միջոցներով:		
13.	Սնվելու համար ապահովվում է ջրով և օճառով լվացվելու և ձեռքերի ախտահանման հնարավորությամբ տարածք, որտեղ ևս պահպանվում է սոցիալական հեռավորությունը: Ընդմիջումը իրականացվում է սահմանափակ թվով մարդկանցով՝ նախապես պլանավորված գրաֆիկով:		
14.	Շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողների ձեռքերն ու գործիքներն ախտահանվում են նախքան աշխատանքային տարածք մուտք գործելը և այնտեղից դուրս գալուց, աշխատանքային տարածքի ցանկացած մակերես կամ սարքավորում ախտահանվում է նախքան աշխատանքի մեկնարկը:		
15.	Շինարարական աշխատանքների ընթացքում բացառվում է անհատական պաշտպանիչ միջոցների համատեղ օգտագործումը կամ փոխանակումը, իսկ համատեղ օգտագործվող գործիքները աղտահանվում են մեկ աշխատակցից մյուսին փոխանցելիս:		
16.	Բացառվում է շինարարական աշխատանքների իրականացումը, եթե տվյալ բնակելի տարածքում գրանցվել է կորոնավիրուսային վարակ կամ կան մեկուսացման ռեժիմում գտնվող բնակիչներ: Անհետաձգելի շինարարական աշխատանքների դեպքում շինարարական աշխատանքներում ներգրավված աշխատողներն աշխատում են ձեռնոցներով, պաշտպանիչ արտահագուստով և դիմակներով:		
Կորոնավիրուսային հիվանդության ախտանշանների ստկայության դեպքում իրականացված միջոցառումները			
17.	Աշխատողի մոտ թեթև հազի, ջերմության (>37.3օC) բարձրացման կամ ինքնազգացողության վատթարացման դեպքում վերջինիս մասին անհապաղ տեղեկացրել է պատասխանատուին:		
18.	Ձեռնարկվել են միջոցառումներ աշատողի հետ շփում ունեցած անձանց շրջանակը պարզելու, նշված անձանց մեկուսացնելու և այդ մասին ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ տեղեկացնելու ուղղությամբ՝ զանգահարելով 8003 համարով: Լրացվել և ՀՏՉ է ներկայացվել արտակարգ պատահարի ձևը:		
19.	Ապահովվել է անմիջական աշխատանքային և ցանկացած այլ նրան հասանելի տարածքի կամ շփման մակերեսի, գործիքների, սարքավորումների, անհատական պաշտպանիչ միջոցների (սաղավարտ, ակնոց, գոտի և այլն) և արտահագուստի անհապաղ ախտահանումը:		

ՀԱՎԵԼՎԱԾ 13. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Փարաքարի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի վերաբերյալ հանրային քննարկման

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. 20-110-Ն/ համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի 5-րդ գլխով սահմանված կարգով 2020 թ.-ի օգոստոսի 25-ին ժամը 11:00-ին, տեղի ունեցավ Սեյմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի շրջանակում Փարաքարի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի վերաբերյալ հանրային քննարկում:

Հակահամաճարակային սահմանափակումներից ելնելով՝ հանրային քննարկումը իրականացվեց առցանց Zoom հարթակի միջոցով:

Հանրային քննարկման մասին հայտարարությունը սույն թվականի Օգոստոսի 14-ին տեղադրվել է Հայաստանի Հանրապետություն օրաթերթի համապատասխան համարում և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կայքում (ATDF) (atdf.am):

Ծրագրի անվանում՝ Փարաքարի միջնակարգ դպրոցի կառուցում դպրոցների Սեյմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում

Համավարկավորողներ՝ ՀՀ կառավարություն, Ասիական Ջարգացման Բանկ

Ծրագրի իրականացնող կազմակերպություն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏՁՀ),

Նախագծային կազմակերպություն՝ «ՆՕՄ Պրոյեկտ» ՄՊԸ

ՄԱՍՆԱԿԻՑՈՒՄ ԷԻՆ

Տեր-Խաչատրյան Ա.՝	<i>ա. Միլեզյան</i>	Փարաքարի միջնակարգ դպրոցի տնօրեն
Սարգսյան Վ.՝		«ՆՕՄ Պրոյեկտ» ՄՊԸ, տնօրեն
Մարգարյան Վ.՝		Փարաքարի համայնքապետարան, գլխավոր ճարտարապետ
Գևորգյան Լ.՝		ՀՏՁՀ, շրջակա միջավայրի մասնագետ
Գրիգորյան Բ.՝		ՀՏՁՀ, սոցիալական մասնագետ



Մասնակցում էին նաև ուսուցչական և ծնողական կազմը, այլ շահագրգիռ կողմեր: Մասնակիցների ընդլայնված ցանկը (4 էջ) և տեսաձայնագրությունը ներկայացվում է կից:

Օրակարգում

- 1) Մեյամիկ անվտանգության բարելավման ծրագրի ներկայացում շահագրգիռ կողմերին
- 2) Դպրոցինսախագծի ներկայացում
- 3) Ենթածրագրին առաջադրվող բնապահպանական և սոցիալական պահանջների ներկայացում
- 4) Հարց ու պատասխան շահագրգիռ կողմերի հետ

Ելույթ ունեցան

1. Փարաքարի միջնակարգ դպրոցի տնօրենը՝ տիկին Տեր-Խաչատրյանը, որը հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց հանրային քննարկման իրականացման նպատակները և կարգը:
2. Ծրագրի նախագծող-ճարտարապետ Վ. Սարգսյանը, ով ներկայացրեց կառուցվող դպրոցի նախագիծը և հիմնական ճարտարապետական լուծումները:
3. ՀՏՁՀ շրջակա միջավայրի մասնագետ Լ.Գևորգյանը, ով ներկայացրեց ՍԱԲ ծրագրի հիմնական նպատակները, ենթածրագրերի իրականացման ընթացակարգը և հիմնական փուլերը, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կարգը, օրենսդրական պահանջները, ինչպես նաև ՀԲ-ի բնապահպանական քաղաքականության շրջանակը:
4. ՀՏՁՀ սոցիալական մասնագետ Ք. Գրիգորյանը, ով ներկայացրեց ծրագրի շրջանակներում գործող Բողոքների լուծման մեխանիզմը:

Հարցեր տրվեցին

5. Հարց հնչեց, թե որքան ժամանակ կտևի շենքի կառուցումը, և որտեղ է ադ ընթացքում դպրոցը շարունակելու գործել: Նախագծող Վ. Սարգսյանը պատասխանեց, որ շինարարությունը կտևի նվազագույնը երկու տարի: Ք. Գրիգորյանը պատասխանեց, որ շինարարության ընթացքում դպրոցի գործունեության շարունակականության և տեղափոխման հարցերը կարգավորում է մարզպետարանը և համայնքապետարանը:
6. Համայնքապետարանի ներկայացուցիչ գլխավոր ճարտարապետ Վ. Մարգարյանը երկու հարց բարձրաձայնեց. առաջինը՝ հնարավոր չէ արդյոք ավելացնել դպրոցի նոր շենքի հզորությունը, և երկրորդը՝ հնարավոր է արդյոք իրականացնել դպրոցի

փուլային ապամոնտաժում և կառուցում: Վ. Սարգսյանը նշեց, որ դպրոցի հզորությունը որոշվում է ՀՀ կառավարության կողմից, և հաստատվել է ԱԶԲ-ի կողմից: Միևնույն ժամանակ դասասենյակների մակերեսը մեծ է՝ 68-70 մք, կյուրաքանչյուր դասասենյակկարող է տեղավորել երեսունից ավելի աշակերտ: Վ. Սարգսյանը նաև հավելեց, որ նախագծվել է առավելագույն թվով դասասենյակ: Նաև ի պատասխան երկրորդ հարցին՝ Վ. Սարգսյանը նշեց, որ անվտանգության և արդյունավետության նկատառումներից ելնելով՝ շինարարության փուլային իրականացումը, շինարարության և դասապրոցեսի համատեղումը մեկ վայրում անհնար է:

7. Հարց հնչեց, թե արդյոք նախատեսվում է հանդիսությունների դահլիճի կառուցում շենքում: Վ. Սարգսյանը նշեց, որ հանդիսությունների դահլիճ, իհարկե, կառուցվելու է:
8. Հարց հնչեց սանհանգույցների քանակության և տեղադրության վերաբերյալ: Վ. Սարգսյանը նշեց, որ յուրաքանչյուր հարկում լինելու է սանհանգույց, իսկ քանակությունը հաշվարկվել է քաղաքաշինական նորմերին համապատասխան՝ այն հաշվարկով, որ յուրաքանչյուր զուգարանակնք կարող է սպասարկել է 50 երեխայի:
9. Հարց հնչեց, թե ինչպես է շահագործվելու հետիոտնային անցումը և արդյոք հասանելի է լինելու այլ անցորդներին: Վ. Սարգսյանը նշեց, որ վերգետնյա հետիոտնային անցումը և դպրոցը անջատվելու են ցանկապատով, և այլ անցորդներ չեն կարողանա մուտք գործել դպրոց: Դպրոցի համար հետիոտնային անցման կողմից տեղադրվելու է դուռ՝ դպրոց մուտք գործելու համար:
10. Հարց հնչեց, թե արդյոք դպրոցում լինելու է տարածք, որը կարելի շահագործել արտաուսումնական դասընթացների կազմակերպման համար: Վ. Սարգսյանը նշեց և հատակագծի վրա ցուցադրեց այն դասասենյակը, որը կարելի է շահագործել նման նպատակով:
11. Հարց հնչեց տարհանման ելքերի առկայության վերաբերյալ, որին ի պատասխան Վ. Սարգսյանը նշեց, որ դպրոցը ունենալու է 8 վթարային ելք: Նախագիծը անցնելու է փորձաքննություն նաև Արտակարգ իրավիճակների նախարարությունում:
12. Հարց բարձրացվեց շենքի տեղադրության վերաբերյալ: Վ. Սարգսյանը նշեց, որ դասասենյակները տեղադրված են երեք կողմերում, իսկ դեպի հյուսիս-արևմուտք, որը լուսավորության տեսանկյունից վատագույնն է, որն էլ դասասենյակ չի նախագծվել:
13. Առաջարկ հնչեց դպրոցի ներսում նախագծել ցայտադրյուրներ, որին ի պատասխան՝ Վ. Սարգսյանը նշեց, որ առաջարկը անպայման կքննարկվի:
14. Հարց հնչեց դպրոցի ջեռուցման վերաբերյալ, որին ի պատասխան Վ. Սարգսյանը նշեց, որ դպրոցի ջեռուցումը իրականացվելու է գազի միջոցով, իսկ արևային կայանը,

որը տեղադրվելու է դպրոցի կտուրին, դպրոցին մատակարարելու է այլընտրանքային էներգիա:

15. Հարց հնչեց կանաչապատման և ծառերի հատման վերաբերյալ: Վ. Սարգսյանը նշեց, որ բոլոր առկա ծառերը պահպանվելու են, և տնկվելու է ևս մոտ քառասունից հիսուն ծառ:

Պատասխանատու՝ Փարաքարի համայնքապետարան, գլխավոր ճարտարապետ

Վ. Սարգսյան

Վարող՝ Փարաքարի միջնակարգ դպրոց,

Ա. Տեր-Խաչատրյան

Արձանագրող՝ ՀՏԶՀ, սոցիալական մասնագետ՝

Ք. Գրիգորյան

Զեռնարկող՝ «ՆՕՄ Պրոյեկտ» ՄՊԸ, տնօրեն

Վ. Սարգսյան

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Փարաքարի միջնակարգ դպրոցի կառուցման» նախագծի վերաբերյալ

ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք
25օգոստոս, 2020թ., ժամը 11:00

«ZOOM» առցանց հարթակ, հանդիպման ID՝ 239 953 9995

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

N	Ազգանուն, անուն	Կազմակերպություն	Զբաղվածություն	Ստորագր.
1	Մանր-իսապատարար Ե Արմեն	Փարաքարի միջն. դպր.	պրն. Երևան	Ա. Գրիգորյան
2	Գաբրիելյան Գաբրիել	Փարաքարի միջն. դպր.	փոխպրն. Երևան	Գրիգորյան
3	Մելիքիսյան Նինանիկ	Փարաքարի միջն. դպր.	նախն. Երևան	Մ. Գրիգորյան
4	Նոստրոմյան Արմաշ	Փարաքարի միջն. դպր.	նախն. Երևան	Ա. Գրիգորյան
5	Նիկոլայիսյան Ե. Ե. Ե. Ե.	Փարաքարի միջն. դպր.	գաղափար. Երևան	Ն. Գրիգորյան
6	Գրիգորյան Գրիգոր	Փարաքարի միջն. դպր.	փոխպրն. Երևան	Գրիգորյան
7	Կոմիտասյան Նրսիս	Փարաքարի միջն. դպր.	փոխպրն. Երևան	Կոմիտասյան
8	Իրադյան Զարգար	Փարաքարի միջն. դպր.	նախն. Երևան	Իրադյան
9	Մանուկյան Եսայի	Փարաքարի միջն. դպր.	կապույտ կողմնակց. Երևան	Մանուկյան

Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱԴՈՒՄ

«Փարաքարի միջնակարգ դպրոցի կառուցման» նախագծի վերաբերյալ

ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք

25օգոստոս, 2020թ. , ժամը 11:00

«ZOOM» առցանց հարթակ, հանդիպման ID՝ 239 953 9995

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

N	Ազգանուն, անուն	Կազմակերպություն	Զբաղվածություն	Ստորագր.
10	Խաչատրյան Աննա	Վարչապետի մեծ. խորհուրդ	ուսուցիչ	<i>[Signature]</i>
11	Խաչատրյան Վարդապետ	Վարչապետի մեծ. խորհուրդ	ուսուցիչ	<i>[Signature]</i>
12	Վարդապետյան Աննա	Վարչապետի մեծ. խորհուրդ	ուսուցիչ	<i>[Signature]</i>
13	Բաղդասարյան Լուսինե	Վարչապետի մեծ. խորհուրդ	ուսուցիչ	<i>[Signature]</i>
14	Խաչատրյան Գոհար	Վարչապետի մեծ. խորհուրդ	ուսուցիչ	<i>[Signature]</i>
15	Վարդապետյան Գոհար	Վարչապետի մեծ. խորհուրդ	ուսուցիչ	<i>[Signature]</i>
16	Վարդապետյան Մարկոս	Վարչապետի մեծ. խորհուրդ	ուսուցիչ	<i>[Signature]</i>
17	Մանուկյան Միլիտիան	Վարչապետի մեծ. խորհուրդ	ուսուցիչ օգն.	<i>[Signature]</i>
18	Վարդապետյան Բենամին	ՀԱՄԶ	ուսուցիչ	<i>[Signature]</i>

Սեյամիկ անվտանգության բարելավման ծրագիր

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱԿՈՒՄ

N	Ազգանուն, անուն	Կազմակերպություն	Զբաղվածություն	Ստորագր.
1	Գրիս Գրիգորյան	ԿԵՄ	Տեղ	Գրիգ
2	Ճիլոս Ասիսյան	ԿԵՄ	Տեղ	Ճիլոս
3	Վահագն Գրիգորյան	ԿԵՄ	Տեղ	Վահագն
4	Վերա Երանյան	ԿԵՄ	Տեղ	Վերա
5	Խաչատր Խաչատրյան	ԿԵՄ	Տեղ	Խաչատր
6	Արթուր Գրիգորյան	ԿԵՄ	Տեղ	Արթուր
7	Վրթանյա Խաչատրյան	ԿԵՄ	Տեղ	Վրթանյա
8	Արցախյան Աննա	ԿԵՄ	Տեղ	Արցախյան
9	Մելիքյան Արթուր	ԿԵՄ	Տեղ	Մելիքյան
10	Գրիգորյան Կարեն	ԿԵՄ	Տեղ	Գրիգորյան
11	Վերաբեկյան Ռոմա	ԿԵՄ	Տեղ	Վերաբեկյան
12	Բաբայան Աննա	ԿԵՄ	Տեղ	Բաբայան
13	Գևորգյան Խաչատր	ԿԵՄ	Տեղ	Գևորգյան

Սեյմիկ անվտանգության բարելավման ծրագիր